Է. ՏԱՐԻ — ԹԻՒ 1,956 — Կ. ՊՈԼԻՍ, 1903 ՓԵՏՐ. 25 — 10 ՄԱՐՏ — 11 ԶԻԼՀԻՃՃԷ, 1320 — 25 ՇՈՒՊԱԹ 1318 — ԵՐԵՔՇԱԲԹԻ

«بوزانتيون»
بوزانت كچيان

Բիւզանդիոն

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

Բ. ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԵԾ ՊԱՀՈՑ

ՀՕՐ ՄԸ ԽՕՍՔԵՐԸ

«ԻՆՉ Պ'ԸՆԷ ՕՐԻՈՐԴԸ»

Տունը մանկութեան առաջին դպրոցն է, ըսուած է։ Բայց ես կ'հաւատամ, սիրելի ընթերցող, որ անիկա երկրորդ եւ երրորդ դպրոցն է նաեւ՝ աղջիկներուն համար։ Մեր մանչ զաւակները դպրոցէն ուղղակի չուկայ կ'երթան, կամ ո՛ և է գործի ասպարէզ մը, ուստի տան կրթիչ ազդեցութիւնը սահմանափակուած կ'մնայ իրենց մանկութեան շրջանին։ Բայց աղջիկներն՝ բատ մեծի մասին՝ դպրոցական ընթացքն աւարտելէ ետքը, «ջրոց մ'ես» ունին անցընելու, շրջան մ'ալ՝ բոլորելու, տան մէջ իսկ, որ այսպէս, բացառաբար իրենց համար, դպրոցին շարունակութիւնը կ'համդիսանայ։ Այս շրջանը բուն դպրոցականէն շատ աւելի կարեւոր է, եթէ աղէկ հասկցուին անոր հնարաւորութիւնները, եթէ ճշտիւ ըմբռնուին անոր ընծայած պատեհութիւնները. զի թո՛ղ որ աղջիկներուն միտքը սովորաբար աւելի կանուխ կ'բացուի քան մանչերունը, աղջիկն հիմակ առաջուան խակ մանուկը չէ. դպրոցին մէջ շատ մը բաներ՝ եթէ ոչ հիմնովին սովրած, գէթ կռահած, ընդնշմարած է, կարգ մը ուսումներ ինքն իր գլխուն յառաջ տանելու, կատարելագործելու կարողութիւնն ստացած է, թերեւս նաեւ՝ յօժարութիւնը։ Հիմա կրնայ իր սիրած ճիւղերն յառաջ տանիլ մօքի հանդարտութեամբ ու անկեղծօրէն, ո՛չ թէ դասատուին հաճելի երեւնալու, անոր նախասիրած բանաձեւերը թութակօրէն արտասանելու և նիշ մը աւելի կորզելու շահախնդրութեամբ։ Քննութիւններու մղձաւանջն հիմա չի հալածեր զինք։ Ժամանակ ունի կարդացածն հասկնալու, և կերածը մարսելու։ Դպրոցական պարտաւորութիւններու ձեւականութիւններէն ազատած, և կեանքի գործնական պարտաւորութիւններուն դեռ ևս գերին չեղած, իր կեանքին կերպիւ իւրք ամենէն նախանձելի շրջանն է զոր կ'անցընէ հիմա,—շրջան մը զոր իրենցմէ ոչ սակաւք, աւա՜ղ, ողբալով կը յիշեն ու կ'մտաւեն յետոյ, կեանքի դառնութիւններուն և յուսախաբութիւններուն մէջ։ Խնդիր է ուրեմն թէ ինչ կ'ընէ Օրիորդը տան մէջ։

—Ամէնս մասամբ կախում ունի աղջկան իր բնական խառնուածքէն, իր սեփական լինելութենէն, իր իմացական—հոգեկան ընդոծին նկարագրէն, մասամբ ալ՝ իր ընտանեկան պարագաներէն կամ ընկերային շրջավայրէն, բայց, գլխաւորապէս, մօքի այն ուղղութենէն, այն ստացուած ճաշակներէն ու յօժարումներէն զոր իրեն հետ բերած ըլլայ դպրոցէն։ Ոմանք դըպրոցէ մեկնելնուն պէս, վկայականը գրպանած թէ ոչ, կ'փութան գիրքերը մէկ կողմ նետել, և վէպ մը առած, պատուհանը նստիլ, ու անցուդարձը դիտել։ Ուրիշներ քիչ մը ատեն ալ կ'առնչեն դաշնակին սեղնաչարը, և դրացիին ջիղերը, և երբ կ'հասկնան թէ Պօն Մարշէին ծախած ձայնաւոր խաղալիկներէն աւելի լուրջ ուսում մ'է դաշնակը, անկէ ալ կ'պաղին, և յուսալքեալ ծնողները կ'գոհանան իրենց սալօնին զարդը պահելով դաշնակը, վայելուչ կահի մը պէս որուն փոշին ամէն օր սրբելու պէտք չկայ։ Ուրիշներ, բախտէն նուազ նպաստաւորուած, տան մէջ արդէն պէտք էին իրենց աղքատիկ և դուզէ տկարակազմ մօր օգնականն ըլլալու, և այնքան պարտաւորեցուցիչ կ'գտնեն առտնին աշխատութիւններն որ ա՛լ ուրիշ բան չեն մտածեր։ Պայմաններու և տրամադրութիւններու բարեբաստիկ զուգորդութիւն մը պէտք է ուրեմն որ դպրոցական յարկը ձգող օրիորդը տան մէջ յառաջ տանի իր մտաւոր զարգացումը, և կատարելագործէ դպրոցին թերի թողածը։

⁂ Ես անտեղեակ չեմ որ տան գործերը շուտասատացուցիչ կամ յոգնեցուցիչ կ'սեպեն զարգացած աղջկան մը համար, որ նաեւ սալօնի մէջ փայլելու գովելի փառասիրութիւնով տոգորուած է։ Ընտանիքին երջանկութիւնը՝ մեծ մասամբ մը՝ նաեւ նիւթէն կախում ունի, և այս նիւթին կարգադրումը, յարդարումն ու զարդարումը՝ վերջ ի վերջոյ՝ պիտի ազդէ ընտանիքին բարոյական գոյութեան վրայ։ Տան մը մէջ ուր կարգ կանոն չկայ, ուր տղոց «վրան գլուխը չկայ», տան մը ուր մաքրութիւնը նախանձելի վիճակ մը չունի, և կերակուրներէն համն ու հոտն հրաժեշտ տուեր են, կարելի չէ որ բարեխառնիկ ըլլայ, ո'րչափ ալ սիրատոչոր երեւի հոն բնակող զոյգը, ո'րչափ ալ տիրուհին մխրճած ըլլայ գեղարուեստի հմայքներուն մէջ, և կուլ տուած՝ օտար լեզուները։ Ամէն բան կարելի չէ ծառայի և աղախինի թողուլ, և նոյն իսկ սպասաւորներ ու սպասուհիներ կառավարելու համար փորձ տանտիկին պէտք է ըլլալ։ Թո'ղ որ ամէն Հայ աղջիկ ապահով չէ իր ապագայ կեանքին մէջ իրեն ծառայողներ ունենալու՝ իր տան կառավարութեան համար։ Հետեւապէս, տան գործերուն անձամբ ընտելանալն ու վարժուիլն անհրաժեշտ պարտականութիւն մ'է իրեն համար։ Իրաւունք չունի խոնարհ աշխատութիւն մը, իր արժանապատուութեան անվայել զբաղում մը համարելու պարտաւորութիւններու շարք մը որք այնչափ էական տեղ մը պիտի բռնեն իր և իրեններուն նիւթական բարօրութեան գործին մէջ։

Որչափ ատեն չեն գործածուած մեր երիտասարդները կ'սիրեն գովել ուսումնականութիւնը, հմտութիւնը, մտացիութիւնը, դաշնակի, ջութակի և երգի մէջ գերազանց ձիրքերն ու կարողութիւններն այն օրիորդներուն որոց ներկայացնելու պատիւը կ'ունենան։ Սալօններու մէջ բարձր կարգի պայծառ բարեմասնութիւններ միայն գովասանքի նիւթ կ'հայթայթեն։ Բայց նոյն այն երիտասարդներն՝ երբ կարգը գայ կարգուելու, կ'հաշուեն նաեւ թէ իրենց ապագայ կենակցին տանտիկնութեան չափն ի'նչ համեմատութեամբ պիտի կըզէ առաջիկայ ընտանիքին ելմտացոյցին մէջ։

Ամէնէն գեղեցիկ աչքերը բան մը չեն տեսներ տան մէջ անցած դարձածէն, երբ տիկինը վարժ տանտիկին մը չէ նաեւ։ Սպասաւորներու կամքին թողուած տունէ մը աւելի ապերջանիկ վայր չկայ բնակելու համար։ Միայն սալօնը չէ որ կը կազմէ ընտանեկան բարեզարդութեան, վայելչութեան ու ներդաշնակութեան բոյնը։ Ամուսնացող երիտասարդն հաշուի կ'դնէ տան ուրիշ մասերն ալ, և որչափ «եթերային» է օրիորդին տրամադրութիւնը, որչափ «օդային» է ապագայ տիրուհիին կրթութիւնը, հարկ կ'ըլլայ հաշուել այնչափ աւելի ծախք սպասաւորներու և անխուսափելի չուայլութիւններու համար, և բատ այնմ ճշտել դրամօժիտին գումարը, կամխաւ հաւասարակշռելու համար ընտանեկան ելմտացոյցը։

⁂ Ընկերային ու տնտեսական, զգացական թէ նիւթական ամէն մտածումներ հոն կը կեդրոնանան ուրեմն որ դպրոցական շրջանին մէջ իսկ, այլ մանաւանդ երբ տուն դարձած է այլ եւս, օրիորդը պարտ սեպէ և հաճոյքով կատարէ տան աշխատութիւններէն մաս մը։

Որչափ ատեն տան մէջ մայր մը կամ նոյն իսկ մեծ—մայր մը գտնուի, Հայու տուներուն մէջ մանաւանդ, կատարել պիտի չտան նորահաս աղջկան մը այնպիսի գործեր որք անոր դէմքին շնորհքն ու ձեռքերուն փափկութիւնը կարենան եղծել ո՛ և է կերպով։ Դաշղիացի դեռատի տանտիկինը, որուն գովեստը կ'կարդայի անցեալ օր, առանձին մտեհաւթեան, խնայասիրութեան ու ժիրութեան այս գլուխ գործոցը, որ իր սիրած ամուսնոյն և պաշտած երկու փոքրիկներուն պահանջած բոլոր աշխատութիւնները կ'կատարէ միս մինակ,—զի իրենց կարողութիւնը չի ներեր ուրիշին կատարել տալու,— և որ, գիշերը, տան բոլոր գործերը լմնցնելէն ետքը, տաք ջուրի լոգանք մը կ'առնէ, կ'սանտրուի, և աշխատութեամբ նուիրագործուած, բայց նաեւ շատ ատեն թօթափուել մը օծուած իր ձեռները ձեռնոցներու մէջ կ'պահէ, որպէս զի փափկութիւնը չկորսնցնեն, և կ'երթայ հանգչիլ, վաստակաբեկ կինը Փէօթրէֆօյէ եղած իրեւ սիրուհի, ի հարկէ հանդուկ մը պէտք է ըլլայ նոյն իսկ Պոլսեցի Հայ ընտանիքներու մէկ մասին համար որ աշխատութեան գաղափարն անբաժան կ'նկատէ խամրելու և գեղեցկութենէն զրկուելու հեռանկարէն, մանաւանդ հոտած մազերու կամ կոշտացած ձեռներու խորշանքէն և փոխ—փոխ եղած եղունգներու դիմաստուրէն։ Բայց եթէ լուացարանին ու խոհանոցին աւելի խոշոր սպասաւորութիւնները կ'խնայուին Հայու աղջիկներուն, ամէնքն ալ, հարուստ թէ աղքատ, պէտք է սովրին ու սիրեն կատարել ինչ որ ընտանիքի անդամներուն մտերմութիւն, հագուստին, առողջութեան, մաքրութեան ու վայելչութեան և տան բարեզարդութեան նախնական պայմանը կը կազմէ։ Այս վարժութիւնն աւանիկ տան մէջ գլխաւոր զբաղում մը պիտի նկատեմ օրիորդին, և անհրաժեշտ նախապատրաստութիւնն անոր առաջիկայ կեանքին։

⁂ Բայց նոյն իսկ ամէնէն հարկեցուցիչ ընտանեկան աշխատութիւնները ժամանակ և միջոց կ'թողուն օրիորդին՝ կարդալու, գրելու, նուագածելու, նկարելու, երգելու, —մօքի և սրտի ամէնէն փափուկ վայելքներուն գոհացում տալու։ Կ'մաղթեմ իմ ամէն դեռատի ընթերցուհիներուս նիւթական միջոցներու դիւրութիւն՝ դպրոցի մէջ սովրուած դաշնակը, ջութակը կամ նկարչութիւնը տան մէջ մասնաւոր վարպետի մը առաջնորդութեամբ կատարելագործելու։ Գեղարուեստի բնական սէրն ու յարմարութիւնը կ'յայտնուին դատաստանական օժանդակութեան շատ կարճ միջոց մը ետքն ալ, և երաժշտականը, ջրանկարը կամ քոտաքն բատ մեծի մասին ինքնօգնութեամբ գործածելու վարժուած օրիորդներու ճարտար մատներուն արտադրութիւնները կ'զարդարեն սակաւաթիւ առանձնաշնորհեալ սալօններ, ուր ամենէն սուղ պչրացները, հին—արդէ ծանրագին արձաններ կ'նսեմացնեն տան օրիորդին իր գծած ֆիզանեկ պատկերին, կամ գունէ հանած վայրկենական լուսանկարին դիմաց, կամ բանած նրբահիւս գորգին, մետաքսիւղէն օթոցին, և ժանեակի, չղարշի, դիպակի ճաշակաւոր մէկ ասեղնանկարին քով։ Բայց Գրականութիւնն այն ճիւղն է Գեղարուեստին որ իր աւելի արուեստական քոյրերուն չափ խորտապահանջ չէ, և գրեթէ մեր ո՛ և է նախկրթարանին շրջանն աւարտած աղջիկ մը կարող է առանձինն յառաջ տանիլ մատենագրական ուսումը, և բաւական է որ հայերէնն ու եւրոպական լեզու մը հիմնովին սովրած ըլլայ, կրնայ գոհացուցիչ կերպով մը և հաճ ատենելիք չափով մը խօսիլ, դատել, մօտիկ ընել եւ մօտիկ ընել տալ գիրքերու, քերթուածներու, հեղինակութիւններու վրայ, ուշիմ քաղաքացուհի մը երեւնելով ինքզինք Գեղեցիկ Դպրութեանց համագգային ոստանին, և ազնուամիտ հետեւորդ մը իմացական աշխարհի տիեզերական եղբայրութեան։

Չեմ հասկնար մեր աղջկանց դըպրոցներէն ոմանց ցուցամոլութիւնը, ուր գաղղիերէնի քով անգլիերէն, կամ անգլիերէնի քով գաղղիերէն դրուած է։ Եւրոպական միակ լեզու մը լիովին կը բաւէ Հայ աղջիկներուն մտաւոր պաշարը կազմելու և Արեւմտեան Գրականութեան անվերջ հորիզոններն անոնց առջեւ լուսելի բանալու։ Եւրոպեան մէ'կ լեզու թող լաւ սովրին, և իրենց իմացական յառաջդիմութիւնը չափ և սահման չպիտի ճանչնայ։ Աւելին ո'չ միայն ցուցամոլութիւն է, այլ և ինքնախաբութիւն. զի աղջկանց ո'չ մէկ դպրոցի մէջ, ո'րչափ ալ երկար ըլլայ ընթացքը, աղջիկները կրնան օտար երկու լեզու հաւասարապէս սովրիլ, և անպատճառ միոյն ուսումը պիտի վնասէ միւսոյն անպէտ ընկերակցութենէն։ Բայց դպրոցական շրջանէն ետքը, տան մէջ, ինքն իր գլխուն, օրիորդը կրնայ ո'ր լեզուն ուզէ ինքն իրեն սովրիլ, բաւական է որ զօրաւոր ըլլայ մայրենի լեզուին և արեւմտեան ո' և է լեզուի մէջ։ Արեւմտեան առաջնակարգ լեզուներն այսօր իրենց մէջ կ'պարունակեն ո'չ միայն իրենց ազգային մատենագրութեան սեփական գանձերը, այլ և, թարգմանութեան միջոցաւ, նոյն իսկ քանի մը տեսակ թարգմանութիւններու միջոցաւ, օտար գրականութիւններու բոլոր նշանաւոր հրաշակերտները, այնպէս որ եւրոպական ո' և է լեզու մը շնորհքով գիտցողը «նովին գործով» տիրացած է մօքի համաշխարհային հարստութեան ամէնէն կարեւոր երակներուն։

Մեր մանչերուն մէկէ աւելի եւրոպական լեզու պէտք կրնայ ըլլալ. զի մեզ ամէն բանէ առաջ միջնորդ—վաճառական ազգի մը զաւակներն ենք, որուն հացն բատ մեծի մասին արտաքին առեւտրական հաղորդակցութենէ կախում ունի, և հետեւապէս, ո'րչափ շատ օտարականներու լեզուն հասկնայ, այնչափ լիադարձակ հաղորդակցութեան յոյս կարող է ունենալ։ Բայց մեր աղջիկ զաւակներուն համար առեւտրական լեզու մը ո'չ այնչափ հացի որչափ մտաւոր զարգացման միջոց մ'է, և մէկ հատը կ'բաւէ, և ասոր փոխարէն, էական պայման է որ այն մէկ հատն աղէկ սովրուած ըլլայ. զի մարդ իմացական զարգացում կրնայ քաղել ա՛յն օտար լեզուէն միայն զոր առանց յոգնութեան, դիւրաւ, իր մայրենի լեզուին պէս կրնայ հասկնալ ու վայելել։

⁂ Ես կ'ճանչնամ աշխատասէր և պարկեշտ Հայ աղջիկներ որք իրենց հայրը կորսնցնելու դժբախտութիւնն ունեցած են, բայց շնորհիւ իրենց սովրած դաշնակին, նկարչութեան կամ օտար լեզուին, իրենց հօր յաջորդած են այսօր իբրեւ ընտանիքին հացը վաստկող, եւ իրենց մայրն և կրտսեր քոյրերը կամ եղբայրները պատսպարող կերակրող ստուար մ'են. զի վերջապէս, մեզ բատ մեծի մասին աղքատիկ հասարակութիւն մ'ենք, ժողովրդային քերթուածներ ունինք Փ—— ———— խորագրերով, ինչպէս այն զոր հայերէն ուսած չեն կրնար... որ մը վերջերս չեներէնի թարգմաներ է իբրեւ գրական գործ, և անխուսափելի է որ ուսմունքը մեր մէջ, մանչերու թէ աղջիկներու համար, օգտակարական (utilitaire) նպատակակէտ մը նաեւ ունենայ։

Ինչէ՞ն է որ բազմաթիւ աղջիկներ, վերջին տարիներս, վարժուհիի վկայական ստանալու ներկայացան՝ հազիւ թաղային դպրոցէ ելած.—որովհետեւ չատեր վստահ չեն իրենց նիւթական ու ընտանեկան վիճակին վրայ։ Փայլելու համար իրենց սպասող սալօն մը կամ և պատրաստ չեն տեսներ անպատճառ, և շատ զանազան կ'ընդնշմարեն առիթը՝ դըպրոցի մէջ իրենց ուսածները լոկ զարդի համար պահելու։ Faute de grive, on mange merle. Ինքնաշխատութեամբ ձեռք բերուելիք կատարելութիւններն եթէ չպսակեն աւելի բարձր կարգի փառասիրութիւն մը, գէթ կրնան անկախ և պատուաւոր կեանք մը ապահովել օրիորդին, փրկելով զայն ինքն իրեն և ուրիշներու բեռ ըլլալու ընկերային անպատեհութիւններէն և անձնական նուաստացումներէն։

⁂ Բայց, սովորական պայմաններու մէջ, օրիորդի մը համար զոր չեն տանջեր ապրուստի կնճռոտ հարցեր և ընտանիքի կսկծալի հանգամանքներ, աւելի քաջալերական զբաղում չկայ քան Գեղարուեստը։ Բարեկիրթ աղջիկ մը որ թափուր չէ Բնութեան այնքան թանկագին որքան ճոխ շնորհներէն՝ ամէնէն գեղեցիկ պարգեւն է զոր Նախախնամութիւնն ըրած է Մարդկութեան՝ ասոր բաժին հանելէ ետքն անվերջ տռամութիւններ, նեղութիւններ, փորձութիւններ։ Անիկա տան մը ամէնէն շնորհալի զարդն է, ծնողաց մխիթարութիւնը, դուրգուրանքի առարկան ներկայացին ու ապագային, որ քաղցրութեան, ներդաշնակութեան, սիրոյ և համերաշխութեան դրոշմը կ'բերէ կ'դնէ ընտանիքին մէջ։ Եւ Բնութեան այս չքնաղ արարուածին ամէնէն վայելուչ զարդարանքն ըլլալ սահմանուած է Գեղարուեստը, որ, առաւելապէս այրերու ձեռամբ մշակուած զարգացած ըլլալուն հակառակ, կարծես ի բնէ նախասահմանուած ըլլար գեղեցիկ սեռին, Մարդկութիւնը վերացնող և իր բարձրագոյն կատարելութեան առաջնորդող աշխատութեանց բաժանումին մէջ՝ ամէնէն աւելի կնոջ բաժնին յատկացուելով։ Ո'վ գիտէ, թերեւս դարեր ետքն այնպէս ըլլայ դարձեալ, քանի որ այրերն աւելի նիւթին փարին՝ համաշխարհային մրցումին բերմամբ, եւ զուտ հոգեկան վայելքներու հայթայթումը թողուն աւելի զգայուն սեռին։

ՏԱՆՈՒՏԻՐ ԾԱՐՕՑ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇ ԻԲՐԵՒ ՀԱՄԼԷԴ

ՏՓՂԻՍ, Փետր. 11

Երէկ գիշեր Արդիստական ընկերութեան թատրոնին մէջ տրուեցաւ Հայոց Տրամադիքական Մարմնոյն ձմեռնային սեզօնի վերջինները ներկայացումը։ Խաղացուեցաւ Շէյքսպիրի Համլէդը։ Համլէդի դերը կատարեց Տիկին Սիրանոյշ, որ եթէ չեմ սխալիր, այս երրորդ անգամն է որ կ'ժտի Նուէթլամոտի հերոսին ներկայացնելու իր ցաւերուն, երազանքին, յուսահատութեան, սիրոյ անսանձ կատաղութեան, ժպիտներուն և փոխադարձ ընկերութիւններու ամբողջին մէջ։

Ազամեանէն ետքն Համլէ՛դն մեր բեմին վրայ, Համլէ՛դն Հայ դերասանուհիի մը բերնին մէջ. այս զոյգ մը բացառութիւններ կ'թէլին ամէն բանիմաց մարդու շրթունքէն երբ թատերական ազդերը ցրուեցան ժողովրդին մէջ։ Անվրդովութիւն և տարակոյս կ'ծածկուէին ամէնուն հոգիին վրայ. դժբախտաբար առանք փարատելու դերը պիտի չկրնար կատարել ներկայ թեթեւցութեամբս։ Տրամադիքական Մարմնոյն դերասանները կարծես խօսք մէկ ըրած էին Շէյքսպիրը խայտ հանելու համար, և դերազանցապէս յաջողեցան ասոր մէջ։ Թերեւս Համլէդն աչքիս առջեւն էր, իր շարժուածները պղտիկութիւն կ'ցուայ, խուլքը մօր կամ սիրուհիի վէտվէտումներ կ'սրտեր, հեծկլտուքը,—այն հեծկլտուքն որ, խելական Համլէդին մէջ՝ հրաբուխ մը վերահաս պոռթկումը պիտի նախազուշակել տար, Տիկին Սիրանոյշին յուսահատ և ակռած կնոջ արցունքներ թափել տուաւ։ Մեր տաղանդաւոր դերասանուհին յաւակնոտ ինքզինքը կարապետուած կ'զգար Գամպիէքատրդ Տիկնոջ, Մարկաբիտի՝ հոգեբանական ուսումնասիրութենէն։ Ըմբոստ մը, մարմինը, գեղեցիկ սեռի յատուկ մարմինը մանաւանդ չատ զուաճանեց իրեն դէմ։ Եւ հակառակ սրտեռագական ջանքերու, չկրցաւ իր բռօֆիլներուն տալ այդ սեռի վայելուչ դիրքը, իր բազուկներուն այրավայել թափը, ոտս և գլուխ թօթուելներու այն բրտութիւնն որով էրիկ մարդու ազդեցութիւնը կ'յատկանշուի. իր ձայնին անհրաժեշտ եղած թաւութիւնը գէթ չափով մ'է։ Այսպէս Տիկին Սիրանոյշ առանց ո' և է սխափարար պատրանք առթելու, իր կնոջականութիւնը պահեց առաջին պահէն սկսած մինչեւ վերջին վայրկեանն և մէջ ընդ մէջ ի գործ դրուած ծաղրելի ճիգերու ի սրտոտ, աղջիկ Համլէդը խաղաց՝ կրակ ու բոց պատանի Համլէդին տեղ։ Եւ այս կատակերգութիւնն երեք—չորս ժամ քրքջուեցաւ երախայական «ի տես»ներու և խնամ բիական ծափերու միջեւ։ Չորս ժամ խնդաց դերասանուհին գալարուեցաւ ու ճչաց մէջտեղ բերելու համար անմահական կերպի ու վրէժխնդրութեան յարափոփոխ փուլերը, և չեմ կարծեր որ այդ գիշերուն ինքզինք իր դերին մէջ զգացած ըլլալու ինքնախաբէութիւնը կրած ըլլայ։ Պ. Պետրոսեան (Պլօզիուս) իր քիչ մը շատ վեր եղած ուսերով, առաջահակ գլխով և չոգեւորուած շնչառութեամբ կուսքի մը տպաւորութենէն աւելին չունեցաւ։ Հօ'ն ուր պէտք էր յուզուիլ, քնացաւ։ Տկն. Զմշկեան, (Տկն. Գերթրուդ) կ'երեւայ ներկայացուած խաղին իմաստին չէր թափանցած. ասիկա ալ Պետրոսեանի հանմայսի սանձ ու անտարբեր մնաց երբ քարերն անգամ պիտի աղաղակէին։ Տկն. Վայսուբեան (Օֆելիա) և Միրաղեան (Բոլոնիուս) շատ հաճոյելի արուեստը առանց այլ ընդացոյի իրենց դերերուն մէջն էին։ Պ. Աբէլեան (Ա. դերասան) ծիծաղելի ըլլալէն անդին չկրցաւ անցնիլ. խե՛ղճ մարդ որ կը կարծէ բնական շնորհ ունենալ ինչ որ իրեն զլացուած է aux bouts des ongles։ Աւելցուցէք ասոր վրայ փոխառացական խօն, փափուք և ցաւագար առուգանութիւն մը։ Պարանը կոկորդը պատռելու աստիճան գոռաց իր կտորն արտասանած ատեն։ Նշանակելի յաջողութիւն ունեցաւ Պ. Աբէլեան այն ատեն միայն երբ իր գլխարկն և վերարկուն, զոր կրնար իր մօտը գտնուած աթոռին վրայ դնել, ջոջավայել կերպով մօտը գտնուող դերասան ընկերի մը տուաւ. որ բեմէն դուրս ընծայելիկ կեանքի դերասաններն շարունակութիւն ըլլալ ենթադրուեցաւ։

Ցաւանք որ ներկայ պայմաններու տակ փորձուած Շէյքսպիրեան խաղերը վերջինը կ'ըլլան ասով։ Ասոնք կա՛մ խաղացուելուն և կամ չխաղացուելու ։ Շէյքսպիրի երկնած to be or not to be-ն գոյութեան իրաւունք ունի հոս ալ։ «Մինչ ցկօչիկ» կ'ըսենք առաւել ժամանք ունեցողներուն։ Վերանալ և շատ յառաջ երթալ անկում պատրաստել կ'նշանակէ։ Ժողովուրդին համբերութիւնը շահագործել է այս ճամբու մէջ յարատեւել և Տիկին Սիրանոյշի խոհեմութենէն կ'սպասենք չորրորդ սխալ մը չգործելու գիտակցութիւնը։

ՀԱՆԴԻՍԱՏԵՍ ՄԸ

ԽՕՍՈՒՐԴՈՒՏՈՒՔ

ԱՆՈՒՇԻ ԹԷՔՍԻՆ ՀԱՅՈՑ ՍԱԼՕՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

—Օ'հ, շատ քիչ կ'առնէք կոր։
—Միւսէն ալ չէ՞ք առներ։
—Բայց ինչո՞ւ չէք լեցներ։
—Խըշնէլ, չառիր։
—Ձեռքովս եփած եմ։
—Մեր Արաքսիին եփածն է։
—Պոլիս չունինք ասկէց։
—Հրամեցէք, խնդրեմ։
—Ասո չեղաւ, հոգիդ սիրես, քովինէն ալ առ։
—Ջուր չէ՞ք ուզեր։

Խնդրելնալը բան մը չէ, հաւատացէք։ Եւ ի՞նչ է եղածը, դգալ մը անուշ, որ ակռադ ցաւցնէ, պեխերդ աղտոտէ, մատուըներդ իրար փակցնէ, և շատ անգամ վրադ գլուխդ պլսակոտելէ զատ բանի մը չի ծառայեր։

Այն օրէն որ պեխերուս բուսնիլը զգացի շրթներուս վրայ, ուխտեցի այդ անշահ մեծարանքին դէմ ձայն բարձրացնել եւ այսօր երբ գրիչս ձեռք կ'առնեմ յօդուածս գրելու համար, ուրախ եմ որ այս նիւթը միտքս կուգայ, մանաւանդ որ ուրիշ բան մը չունէի գրելիք։

Բայց չէ՛ք գիտեր ի՛նչ չարչարանք է այդ որու կ'ենթարկեն զմեզ մեր Հայ կիները ամէն անգամ որ առիթը կ'ներկայանայ մեր յարգանքները իրենց մատուցանելու։ Մեր առնութեան դէմ ամէնէն մեծ անարգանքն է որ կ'ըլլուի այդ տիկիններու կողմէ, որովհետեւ պզտիկ լակոտներու տեղ կ'դնեն զմեզ, մեր շրթներուն քըսելով բոռ մը անուշ որ շատ անգամ եւ լեւէյներ կուտայ մեր ստամոքսին։

Եւ ի՞նչ է եղածը. ոչինչ։

Եթէ միւքերնուն մեր սիրտը առնել է,

ՇԵՐԼՕՔ ՀՕԼՄՍԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ (88)

ԴԵՂՆԱԳՈՅՆ ԵՐԵՍԸ

—Ասով գոհ եղայ, շարունակեց մեր այցելուն, թէեւ առաջին անգամ էր որ մեր միջեւ գաղտնիք մը կ'ըլլար։ Չեք մը տուի իրեն և այլեւս չխորհեցայ այս գործին վրայ։ Կարելի է վերաբերութիւն չունի ետքէն պատահածներուն հետ, բայց հարկ զատեցի այս պարագան ալ յիշել։ Քիչ մ'առաջ ըսի ձեզ թէ տուն մը կ'գտնուէր մեր տունէն ոչ շատ հեռու։ Մէջերնիս դաշտ մը կար։ Բայց այդ տունն երթալու համար պէտք է անցնիք փողոցէն և յետոյ նեղ ճամբայ մը դառնաք։ Ճիշտ անոր ետեւը կայ սկովտական չոճիներու գեղեցիկ պուրակ մը, ուր շատ կ'սիրեմ պտտիլ։ Տունն ութ ամիսէ ի վեր պարապ էր, և ցաւալի էր աս, զի տեղը շատ գեղեցիկ էր, հնաձեւ անդաստակով մը, որուն չորս այծեմնիկներ (հանըսըքըլ) կային։ Շատ անգամ կեցած և հարցուցած եմ ինքզինքիս թէ ինչ կոկիկ սիրուն տուն մը կ'ըլլար ան։ Արդ, անցած երկուշաբթի գիշեր այդ ճամբուն վրայ կ'պտտէի երբ տեսայ գործերու դէզ մը և ուրիշ բաներ մարդաբեռնին վրայ, անդաստակին քովը։ Ցայտնի էր թէ տունը վերջապէս վարձուած էր։ Կեցայ, դիտեցի և զարմացայ թէ ի՛նչ տեսակ մարդիկներ էին որ մեզ մօտ ապրելու եկած էին։ Երբ կ'նայէի, յանկարծ նշմարեցի որ մէկը վերի պատուհաններուն մէկէն զիս կ'դիտէր։ Չեմ գիտեր թէ ի՛նչ կար այն դէմքին վրայ, Մր. Հօլմս, բայց ինծի անանկ եկաւ թէ կռնակէս վար սառուցիւն մ'իջաւ։ Բաւական հեռու էի և չէի կրնար դիմագծերն որոշել, բայց անբնական և անմարդկային բան մը կար դէմքին վրայ։ Այս տպաւորութիւնն ունեցայ, և դէպ առաջ գացի աւելի մօտէն տեսնելու համար այն անձն որ կ'հսկէր վրաս։ Բայց երբ այնպէս ըրի, դէմքը յանկարծ անյայտ եղաւ, այնքան յանկարծ որ կարծես թէ սենեկին մթութիւնը կորզեց զայն։ Հինգ վայրկեանի չափ կեցայ փորձելով տպաւորութիւնս վերլուծել։ Չէի կրնար ըսել թէ այն դէմքն էրիկ մարդո՞ւ թէ կնոջ դէմք էր։ Բայց ամէնէն աւելի երեսին գոյնն ազդած էր իմ վրաս։ Մահատիպ դեղին գոյն մ'ունէր, խիստ ու դաժան երեւոյթով մը, անհունի կերպով անբնական։ Այնքա՞ն շփոթած էի որ որոշեցի քիչ մ'աւելի մօտէն տեսնել տան նոր վարձակալները։ Մօտեցայ եւ դուռը զարկի, որ անմիջապէս բացուեցաւ բարձրահասակ ու նիհար կնոջ մը կողմէ, կոշտ եւ զզուելի դէմքով։—Ի՞նչ կ'ուզէք, հարցուց հիւսիսայինակի մը շեշտով։

—Ես ձեր դրացին եմ և հոստ կը նստիմ բոփ, տունս ցոյց տալով։ Կ'տեսնեմ որ նոր տեղափոխուեր էք։ Ուստի կ'խորհիմ որ եթէ կրնամ օգտակար ըլլալ ձեզ....

—Այո՛, երբ պէտք ունենանք, իմաց կուտանք ձեզի, ըսաւ և դուռն երեսիս գոցեց։

Վշտանալով այս կոշտ մերժումէն, ետ դարձայ և տուն գացի։ Գիշերն ի բուն, թէեւ փորձեցի ուրիշ բաներու վրայ խորհիլ, բայց միտքս կ'երթար պատուհանը տեսած երեւոյթիս եւ կնոջ տմարդութեան։ Որոշեցի բան մը չըսել կնոջս, զի ջղային կին մ'է, և չէի ուզեր որ մասնակից ըլլար այն անհաճոյ տպաւորութեան զոր կրեցի ես ինքս։ Սակայն, պառկելու երթալէ առաջ, ըսի թէ տունը վարձուած էր։ Պատասխան չտուաւ։ Ես սովորաբար քունը շատ կ'սիրեմ։ Մեր ընտանիքին մէջ առածի կարգ անցած էր թէ գիշերն ի'նչ որ ալ ըլլար, չէի արթննար։ Բայց այն գիշեր, չեմ գիտեր թէ իմ փոքրիկ արկածէս պատճառած թեթեւ գրգռութիւննէն էր ինչ էր որ սովորականէն շատ թեթեւ քուն մ'ունեցայ։ Քունիս մէջ ինծի անանկ եկաւ թէ բան մը տեղի կ'ունենար սենեկին մէջ և աստիճանաբար տեսայ որ կինս հագուած էր, վերարկուն կ'առնէր եւ գլխարկը կ'դնէր։ Շրթունքս իրարմէ պիտի բաժնուէին զարմանքս յայտնելու կամ զլանութիւն մ'ընելու համար այս վաղաժամ պատրաստութեան համար, երբ կիսաբաց աչքերս յանկարծ ինկան անոր երեսին վրայ, որ կանթեղէն լուսաւորուած էր, եւ ապուշ թեւ չկրցայ խօսիլ։ Ունէր այնպիսի արտայայտութիւն մը զոր երբեք տեսած չէի առաջ, և երբեք մօքէս պիտի չանցնէի թէ անոր երեսը կրնար այդպիսի արտայայտութիւն մ'ունենալ։ Տժգոյն էր մահատիպ, և շնչասպառ։ Վերարկուն հագած միջոցին դէպ անկողինը կ'նայէր գաղտագողի, տեսնելու համար թէ արդեօք արթնցեր էր զիս։ Կարծելով թէ տակաւին կ'քնանամ, անձայն դուրս ելաւ սենեակէն, և վայրկեան մը ետքը լսեցի սուր ճռինչ մը, որ վիճակի դրան ծխնիներէն միայն կրնար եղած ըլլալ։ Անկողնիս մէջ նստայ և մատներս մահճակալին ձողերուն զարկի համոզուելու համար թէ իրօք արթնցած եմ։ Ցետոյ բարձին տակէն ժամացոյցս առի և տեսայ որ առաւօտեան երեքն էր։ Կինս ի՞նչ ընելու համար փողոց կ'ելլէր առաւօտեան ժամ 3ին։ Իբր քսան վայրկեան նստայ անկողնիս մէջ այս բանին վրայ խորհելով և հաւանական բացատրութիւն մը գտնելու աշխատելով։ Բանի՛ կ'խորհէի, այնքան տարօրինակ և անբացատրելի կ'երեւար ինձ։ Տակաւին վարանքի մէջ էի երբ լսեցի դրան մեղմով գոցուիլն եւ կնոջս ոտքին ձայնը՝ սանդուղին վրայ։—Ո՞ւր էիք, Էֆի, հարցուցի նորա մտած ատեն։ Բուռն կերպով ցնցուեցաւ եւ ճիչ մ'արձակեց երբ այսպէս խօսեցայ։ Այդ ճիչն ու ցնցումն աւելի խռովեցին զիս, վասն զի մեղապարտ բան մը կար անոնց մէջ։ Ամուսինս համարձակ և անկեղծ կին մ'եղած է միշտ։ Պաղութիւն մ'եկաւ վրաս երբ տեսայ որ իր սենեակը քաշուեցաւ։ Զարմանալի չէ՞ր իր ճիչն ու նահանջն երբ իր ամուսինն էր որ կ'խօսէր հետը։—Արթնցե՞ր էք, Ճէք, պոռաց ջղային ծիծաղով մը։ Կ'կարծէի թէ չէք արթննար։

—Ո՞ւր էիք, հարցուցի աւելի խստութեամբ։

—Իրաւունք ունիք զարմանալու, ըսաւ։ Տեսայ որ մատները կ'դողային վերարկուին կապիչը քակած ատեն։—Չեմ յիշեր թէ ասկէ առաջ կեանքիս մէջ այսպիսի բան մ'ըրած ըլլամ, ըսաւ։ Իրողութիւնը սա է որ նեղութիւն եկաւ վրաս և փափաքեցայ թարմ օդ շնչել։ Սառեցիս կ'կարծեմ թէ պիտի նուաղէի եթէ դուրս չելնէի։ Քանի մը վայրկեան դրան առջև կեցայ, և հիմա բոլորովին աղէկ եմ դարձեալ։

Այս պատմութիւնն ըրած ժամանակ բնաւ երեսս չնայեցաւ։ Ձայնը սովորականին պէս չէր։ Ցայտնի էր թէ ըսածները սուտ էին։ Պատասխան չտուի, բայց երեսս պատին դարձուցի, սրտաբեկ, միտքս հազար խռովայոյզ կասկածներով լեցուն։ Ի՞նչ բան էր ան զոր ամուսինս կը պահէր ինձմէ։ Այս տարօրինակ պտոյտին ատեն ո՞ւր գացած էր։ Զգացի թէ միտքս պիտի չխաղաղի մինչեւ որ չգիտնամ։ Չուզեցի նորէն հարցնել իրեն, քանի որ անգամ մը սուտ խօսած էր։ Գիշերուան մնացեալ մասն անդադար աչքին անդին դառնալով, և մտքիս մէջ կազմելով զանազան ենթադրութիւններ, իրարմէ աւելի անհաւանական։ Այն օր քաղաք պիտի երթայի, բայց միտքս այնքան վրդովուած էր որ չէի կրնար գործի վրայ խորհիլ։

ՍԸՐ Ա. ՔՕՆԸՆ ՏՕՅԼ
Թարգմ. Փ. ՇԻՐԱԿԱՑԻ

անուշ ժամու մը՝ տասը դգալ անուշ կ'արժէ։ Բայց, յանուն Աստուծոյ, ազատեցէք մեզի այդ չարչարանքէն։ Ես իմ մասիս խօսելով, ինծ այնպէս կ'թուի թէ անուշ մեծարելու սովորութիւնը մեր բարքերուն ամէնէն գռեհիկ մէկ կողմն է։ Այդ սովորութեան մէջ ըղձանքով բան մը կայ, չգիտեմ ինչ մը ռամկական, քիչ մը չսեւ և չատ մ'ալ լղրճուկ, որ վերջապէս պէտք է մէջ տեղէն վերնայ, մոռցուի, անհետանայ։ Ալաֆրանկա՞յ ենք, կամ թէ չենք։ Ըլլալուն և չըլլալուն մէջ տարուբերիլը չատ ծիծաղելի բան է, ըսեք ինծի աղէկ գիտէք, չէ՞։ Մեր հին, բարի սովորութիւններէն չատ անծանի բաներ կորսուեցան և եթէ մնայ անուշն է որ կ'դիմանայ, պատճառը չատ փափուկ բան մը ըլլալն է թերեւս։

Այցելութիւններուն ամէնէն չատ յոգնեցուցիչ մասն է անուշին ափսէն որ անխուսափելիօրէն աչքիդ կ'մնկցնեն, ափսէի պաշտօնէներու կողմէ որ չատ անգամ աղուոր ըլլալու մեղմացուցիչ պարագայէն ալ չեն կրնար օգտուիլ։

Անուշը՝ անուշ պաշտօնէի մը կողմէ, ça passe encore, բայց չէ, 90 % անանկ աղջիկներ են ասոնք որ երեսնին նայելուդ պէս լեղի լեղի կ'դառնայ անուշի կըտորը զոր ահագին բարեկամեցողութեամբ մը վար կ'զրկես չնորհիւ դաւաթ մը ջուրին։

Երեւակայեցէք անանկ մը ութ տասը հոգի հիւր եկած են։ Բառորդ մը կ'անցնի չանցնիր. բրա՛փ, անանալին գալը կտնակին վրայ կ'դառնայ և monumental բան մ'է որ ներս կ'խուժէ։ Ահագին ափսէ մը, խորանի մը պէս չալուած, ծանր, mastoc, որ թեւերը կ'րրչնէ խեղճ Մարիային։ Տան ափրունիներէն կին մը և կամ երկու աղջիկ ոտքի վրայ կ'ցատկեն, խուժան մ'է այս. կառք կառք կ'ըլլան, մէկը հոս կ'քաշէ, միւսը հոն, իրարու աչք կ'ընեն ներկաներու մէջ hiérarchie մը սահմանելու համար և իրարու քղանցքին վրայ կոխելով, երբեմն ալ ոտքին, կ'քաշեն պաշտօնէին թեւէն և կ'ներկայացնեն ափսէն աչքիդ։ Այդ բոնբոնելէն կ'չուարիս, ոտքի ելլա՞ս մի կամ նստիս, որոշում տալու ժամանակ չեն ձգեր, արդէն անուշի ամանին բերանը կ'բացուի։ Կէս նստուկ, կէս կայնած ridicule վիճակիդ մէջ, արդէն տամնվլեց բառ արտասանած է օրիորդը դէմդ կայնած և իբրեւ թէ ասիկա բաւական չըլլար, ամրէն մայրը գլուխը ձեր կողմը դարձնելով։

—Աղէկ լեցուցէք մը կ'դառայ ձեռքերը իրար չփելով։

Տանտիկինը կ'սկսի, չես գիտեր թէ գդալո՞վ մը ուտես կամ պատառաքաղով, և ես գիտեմ եմ որ մարդերուն ամէնէն ճարպիկը միչտ հակառակ ապսր ձեռք կ'առնէ այդ բրինձոսով վիճակէն դուրս ելլելու համար։ Հիմայ երկու տեսակ անուշ կայ աչխարհ, որմէ ասնես. աչքդ չընբռներն կ'խածնէ. եկու տես որ օրիորդը կ'սպասէ որ ձեռքերնիդ առնէք, մէկ ձեռքերնիդ գդալը և միւսին մէջ անուշամանը, աղէկ կացութեան մը մէջ կ'գտնէք դուք զձեզ, մէկը վար դնելու տեղ, միւսը կը ձգէք, կ'չուարիք, կ'կարմրիք, կ'նեղանաք, անուշը վրանիդ կ'կաթէ, ջուրի գաւաթին լեցունը կ'փռտէք և խռովածներու կ'համբուրեք չարունակ,—չնորհակալ եմ—ըսելու չի միար, ԲԷֆոյին կ'հեռանայ և ապուշութեամբ կ'սեռէք որ դգալը ձեռքերնիդ է մնացեր։

Օ՜ֆ, ... քաչուելու բան չէ։ Եղածը ինչ է. . օխան հինգ մէթալիկ արժող չաքարին մէկ տամնհազարերորդ մասով չրթները աղտոտել, le jeu ne vaut pas la chandelle, իրաւ որ։ Եւ ինչ խրատներով. կ'աղաչեմ, մեզի այս polichinelle-ի վիճակին մէջ պիտի դնեն, ո՞վ է ըսեր թէ մենք իրենց գդալները լղրճուտելու համար գացած ենք հոն, նստած տեղերնիս ինչ պատճառ կայ որ ծիծաղելի դառնանք, ո՞վ է ըսեր թէ մենք իրենց անուչին ենք մնացեր, ինչ է այս վերջապէս։

Գթութիւն, տիկիններ։ Կ'խոստովանինք որ ձեր Բ[illegible] անուշն այնքան կամնոչ է որքան զմրուխտը, և սերկեւիլն այնքան սուտակագոյն՝ որքան եպիսկոպոսին մատանին, ձեր չէչէրն հիանալի է և ծաղկի անուշը՝ ինկարօտ ասոնց բաղկեք չկայ, բայց ասոր՝ պատճառ մը չէ որ մեր քիթէն հանէք բերաններս թխմածնիդ և հայհոյել տալ բնութեան որ թուրունքը լեղի ստեղծելէ ետքը տկարութիւնը կ'ունենայ թող տալու որ անուշնայ ձեր քնքուշ մատներուն տակ։ Բնութեան դրած օրէնքները փոխեցէք, եթէ կ'ուզէք, բայց ձեր անուշն ալ ձեզի, ԲԷֆոյն ալ ձեզի, ա՛լ հերիք է, մեզի ալ մեղք է վերջապէս։

Երէկ մարդեր անուշ բռնելու եղանակն անուշով չըլլար, ներեցէք որ դիտել տամ ձեզի։

Ուրիշ բան մ'ալ կայ։

Անուշ մեծարելու դրութիւնը, իր անխուսափելի ափսէով, արծաթ գդալներով, զինուորներու պէս չարուած գաւաթներով, լղրճոտած գդալներու յատուկ ամանով չատ համապատասխան չեմ գտներ այն ճաչակին որ կ'տիրէ ձեր ընդունելութեան սենեակին կահաւորման մէջ։ Լուի [illegible] ոճով յարդարուած սալօնի մը մէջ անուշ հրամցնելը [illegible] թատրոնի մը պէմին մէջ բաղձալը կ'նմանի։ Իրար չի բռներ։ Ձեր սենեակին [illegible]ները, [illegible]ները, [illegible]ները, [illegible], [illegible]ները, թիթեռնիկի թեւերու պէս նուրբ վարագոյրները, հոս հոն դրուած [illegible]ները, ձեր հագած չրջազգեստը, ձեր ամորոտւելու և խօսելու եղանակը, պատերու վրայ կախուած նկարները, այս ամէնն անանկ չրջապատ մթնոլորտ մը կը դնեն ձեր սրահին մէջ որ ներելի չըներ այլ ևս ընդունիլ անուշին ԲԷֆոյն, ինչպէս չպիտի ընդունէիք հոն ձեր կաթնավաճառն եթէ չալվարներով ներս մտնէր։ Եւ յետոյ, non sens մըն է անուշը։ Ոչ զովացուցիչ է ան և ոչ կազդուրիչ, թէյին, լիմօնատին և կամ գաւաթ մը liqueur-ին նման։ Ասոր բան մը անուշը, տղայական, յիմար, ու ընծայած հաճոյքէն աւելի տաղտուկ կ'պատճառէ։

Երեւակայեցէք վաթսուն տարեկան մէկը, ճերմակ մօրուքով, պատկառելի գիմագծերով որ յոգնութիւնը յանձն կ'առնէ գալ ձեր ձեռքը սեղմելու։ Ազնի՛ւ մարդը։ Կ'նստի, չի նստիր, օ՛ն յառաջ անուշին թէփսին, և կ'ուզէք որ իր այդ յոգնութիւնը և քաղաքավար վարմունքը վարձատրէք մէկ քառորդ սրամ ՉէՀէրտով որ անպատճառ մարդուն սկուտ մօրուցուած ցաւերը ոտք կ'հանէ, անողջութիւն է ասիկայ եւ ապացոյց մը պարզապէս ձեր—ոչ կենցաղագիտութեան։ Մարդը չատ աւելի գոհ պիտի մնար եթէ պարզ սուրճ մը բերէին, և թերեւս չատ աւելի չնորհակալ պիտի ըլլար եթէ ոչինչ հրամցնէիք իրեն։

Իզմիրցի կիները մանաւանդ որ այնքան լաւ գիտեն ընդունելութիւն մ'ընելու եղանակը, այնքան հրապուրիչ են իրենց չարժուձեւերուն մէջ, այնքան գիտակցօրէն հագած են իրենց տանը կահաւորման և այնքան հաւնիլ իրենց տանտիրուհոյ դերին մէջ, չեմ գիտեր ինչու ինծմէ առաջ չեն մտածած այս մեծ անպատեհութեան վրայ և չատոնց չեն թաղած իրենց արծաթեղէններու դարակին մէջ անուշին ափսէն և ամանը։

Ամէն անգամ որ տանիկ փայլուն սալօնի մը մէջ կ'գտնուիմ և կ'ոչնէմ այդ եւրոպականացեալ օրը, երբ հեչտաղին կերպով կ'վայելեմ այն հիանալի և վեհանձն հիւրասիրութիւնը որ Իզմիրի մեր կիներուն յատկանչական մէկ գեղեցիկ կողմն է, յանկարծ նայիս, հմայաթափ կ'ըլլամ երբ ներս կ'բերեն այդ անիծեալ ԲԷֆոյն, corvée մը որ հակառակ չատ քաղցր ըլլալուն, corvée մ'ըլլալէ չի դադրիր։ Եւ ճիշդ այս պարագան կ'նմանի, ինչո՞ւ չըսեմ, այն պատրանքին զոր կ'ունենաս երբ գեղեցիկ կնկան մը կ'համբուրես, կնկան մը որ վրայէն չատ ճաչակով հագուած է, բոտ վերջի նորաձեւութեան, համակ ատլաս և մետաքս, փետուր և ծաղիկ, թաւիչ և մետաքս, վերջապէս կին մը չէ՛ք՝ այնքան՝ որքան կը բաղձանք որ ըլլայ, և երբ պարզ հետաքրքրութեան համար քղանցքը վեր կ'առնես, զարմացմամբ և յափրանքով կ'տեսնես թէ հասա եւ կոչտ ամերիքանէ կըտրուած են տակէն հագածները։(*)

Անուշին դէմ որքան ատեն որ լեզի բաներ չըսենք, միչտ դատապարտուած պիտի ըլլանք զայն կլլելու։ Բայց ես գիտեմ թէ մեր տանտիկինները անգամ մը որ այս գանգատը ականջնին հասնի, ինչպէս միչտ՝ այս անգամ ալ, ազնուութիւնը պիտի ունենան իրենց հաւանութիւնը տալու եւ ձեռք ձեռքի տուած Պանդոյնե մը պիտի կարդան իրենց ԲԷֆոյի կէֆոյին վրայ և զայն տապալելի մը մէջ անցնելով, ԲԷֆոյին մէկ անկիւնը պիտի կախեն պատէն ի վար, պատուիրելով որ տեղէն չի խախտի մինչեւ այն օրը որ հարմարի մը ԹԱԹԼԻԼԻՆԵՐԸ մեծարելու համար իր պէտքը պիտի զգացուի։

Մենք, երէկ մարդիկս չատ բան չահած ենք քառասուն տարին անգամ մը ձեր խօսքը բռնելով, ո՞վ փափկասուն կանայք Իզմիր աչխարհի։

Եթէ դուք ալ, հարիւր յիսուն տարին անգամ մը մեր խօսքը բռնէք չատ բան չէք կորսնցներ, կ'երաչխաւորեմ ձեզի։

Անուշ մեծարելու սովորութիւնը, ինչպէս կ'ըսէ... Տէր Դաւիթ, հարիւր յիսուն տարուան բան մ'է, ծ'հ, անկէց ի վեր չատ բաներ անհետացան և անուշն ալ պէտք է մէջտեղէն վերնայ, ինչպէս մէջ տեղէն վերցան մալաքօֆը, թուսնուրները, ճիւպպէն, էնթարին, չալվարը, կիներուն փէսերը, օխան, և քիչ մ'ալ... ամուսնութիւնները։ (**) Յ. ԱԼՓԻԱՐ (***)

(*).—Այս մասամբոլի կամ ամերիքանի խնդիրը ըստ կալ չունի անուշի թէփսիին հետ, և բռնազբօսիկ մուտք մը կ'գործէ նիւթին մէջ։ Մ. Խ.

(**).—Իրաւ է որ չատ մը ամուսնութիւններու ճակատագիրն անուշի թէփսիին չուրջն որոչուած է, իրաւ է որ անուշութիւն չեղած տեղ ամուսնութիւն չի մնար, բայց աւելի չի հետեւիր թէ ամուսնութիւններն ալ պիտի վերնան երբ մեր տուներէն վերնայ անուշը։ Մ. ԽՄԲ.

(***). — Հաճութեամբ կ'ձայնակցինք Արեւելեան Մամլոյ մէջ հրատարակուած այս արդարացի բողոքին և վստահ ենք որ իր ազդեցութիւնը պիտի ընէ. զի 20 տարուոյ չափ առաջ նոյն դիտողութիւններն ըրած ըլլալով նաեւ բարեյիչատակ երգիծաբան Պարոնեան, արդիւնքն անկէ ի վեր զգալի եղաւ, և այսօր Պոլսահայոց սալօններուն մէջ կէս առ կէս պակսած է անուշ հանելու սովորոյթը։ Սովորական այցելութիւններու սուրճ միայն կ'հանուի, իսկ հանդիսական օրեր, սրահին մէկ անկիւնը վայելուչ կահի մը վրայ զետեղուած կ'ըլլան տան մէջ պատրաստուած կամ պատրաստ գնուած զանազան տեսակ բէքսիներ, որոցմէ ուզողը կ'առնէ, չուզողը չառներ. սափրուամ, ամչնալ, նեղել չկայ տանտիրուհիին կողմէ։ Հիմա սալօններուն մէջ ուրիշ վայելքներ կ'փնտռուին, երաժչտութեան, խօսակցութեան ձեւի տակ։ Հիմա միտքերն աւելի լեցուն են, և պէտք չունին անուշի թէփսիին՝ ժամ մը անոր պարունակութեան վրայ խօսելու համար։ Նոյն իսկ նկարներու, գիրքերու, թերթերու, գրուածներու վրայ խօսակցութիւններ հաճելի կերպիւ անցընելու կը բաւեն այցելութեան մը կէս կամ մէկ ժամը։ Մ. Խ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՐՑՈՒՄԸ. — Անգլիոյ նորակազմ նաւային կայանն Հիւսիսային Ծովուն մէջ.— Երեսփ. Ժողովին Մարտ 5ի նստին մէջ, Մր. Պալֆուր կարդ մը կարեւոր յայտարարութիւններ ըրաւ։ Նկատելով որ մարտանաւերը կ'չատնան և հիմակուան զինուորական նաւահանգիստները չեն բաւեր զանոնք պատսպարելու, նկատելով նաեւ այն պարագաներն որք Անգլիոյ արեւելեան ծովեզերքին վրայ նաւային կայան մ'ունենալու պէտքն զգալի կ'ընեն, Կառավարութիւնն որոշեց Հիւսիսային Ծովուն մէջ, Սկովտիոյ կողմը, Ֆորթ գետին բերնին վրայ, զինուորական նաւարան մը կազմել, որ պարունակէ նաւեր նորոգելու համար չոր աւազան, նաւային գործարաններ, ամբարներ, դիրք և պատսպարան՝ պատրաստ մարտանաւերուն համար, և մթերանոցներ ու զինարաններ նաւատորմին ամէն կարգի պէտքերուն խուկոյն գոհացնելու համար։ Բոլոր երեսփոխանները անխտրաբար հաւանեցան թէ ինչ հաւանեցնել կ'ուզէր Վարչապետը, և ամենքն ալ միաձայն ծափահարեցին։ Թէեւ ո՛չ ոք Գերմանիոյ դէմ բառ մը արտասանեց, բայց պէտք չունէին բացատրութեան՝ կռահելու համար թէ Կառավարութիւնը, ամէն կարեւոր զգուչութիւն ի գործ կ'դնէ Գերմանիոյ նաւային սպառազինութեանց ցոյցին դէմ, և Անգլիոյ նաւային ոյժին գրգռած նախանձութեան դէմ։ Ցայտնի է թէ Միջին Դարերուն մէջ, երբ ծովի կողմէ Անգլիոյ միակ թչնամին Ֆրանսան էր, Անգլիա կերտեց և չինեց Բորդսմութի և Բլիմութի նաւարանները, Մանչի Ծովին մէջ Պրեստի ֆրանսական նաւարանին դիմաց։ ԺԷ. Դարուն մէջ, երբ Հոլանտայի հետ կռիւներու երկար չարքը տեղի ունեցաւ, Թէմզ և Հարուիչ գետերուն բերաններն ամրացուեցան, եւ նաւարաններ հաստատուեցան հոն՝ պաչտպանելով Տուվրի նեղուցին բերանն՝ Հիւսիսէն (Լա Հէյէն, Անվերսէն, Ամսդէրտամէն) եկող հոլանտական յարձակումին դէմ։ Բայց ի՞նչ էին Ֆրանսայի և Հոլանտայի երբեմնի ծովային ոյժերն այն նոր, կորովի, հսկայ զօրութեան հետ զոր Գերմանիա կ'չինէ օրէ օր, միտքը դրած ըլլալով օր մը ծովերու տիրապետութեան համար կռուիլ իր անգլեւսաքսոն մեծ ցեղակցին հետ։ Հետեւապէս, Անգլիա պէտքն զգաց նաւային կայանի մը, դէմ դնելու համար Էլպայի գետաբերանէն սպառնացող վտանգին։ Եւ ո՛չ միայն Էլպայի. զի ահա՛ Քրոնչդատ ալ տարուէ տարի ահարկու կ'դառնայ. Ռուսիա ո՛չ նուազ նախանձորդ է Մեծն Բրիտանիոյ նաւային ոյժին և ո՛վ գիտէ, օր մը գուցէ Գերմանիա և Ռուսիա միացնեն իրենց նաւային ոյժերն Անգլիոյ դէմ։ Ուստի, արեւելեան ծովեզերքին վրայ կառուցուող այս նոր բերդն ու նաւարանը պաչտօն պիտի ունենան պաչտպանել Անգլիոյ արեւելեան և հիւսիսային ծովեզերքները, և միանգամայն չուտափոյթ օգնութիւն հասցնել այն նաւատորմին որ Էլպայի և Քրոնչդատի կողմերէն եկող թչնամի նաւերուն դէմ պիտի մաքառի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆ ալ խնդիր մ'է որուն կարեւորութիւնը կ'զգայ Մեծն Բրիտանիա, Գերմանիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի հակակիր զգացումներէն և յաբաճուն սպառազինութիւններէն դրդուելով։ Երկար խորհրդակցութիւններէ ետքը, և ի նկատ առնելով Թրանսվալի պատերազմին դասերը, Դահլիճն որոչեց որ ծովային և պատերազմական պաչտօնարանները խաղաղութեան ժամանակ իսկ խորհրդակցութեամբ պատրաստեն զինուորական չարժումները, նաւատորմի և բանակի գործակցութիւնները, զօրահանութիւնն և օգնութիւն և պաչար հասցնելու ամէն սպասարկութիւնները։ Հետեւապէս, Մր. Պալֆուր Երեսփ. Ժողովին քուէարկել տուաւ սա մօտ որոչում մը թէ մնայուն կերպով, խաղաղութեան ժամանակ, «Ազգային Պաչտպանութեան Ցանձնաժողով» մը կազմուած ըլլայ, անդամակցութեամբ օրուան Վարչապետին, ծովային ու պատերազմական նախարարներուն և Պետական Խորհրդոյ Նախագահին, որուն ի հարկին խորհրդակցութեան հրաւիրուին արտաքին գործոց նախարարը, ելմտական նախարարն և Հնդկաստանի նախարարը, և որուն մըչտակայ խորհրդականներն ըլլան ծովային պաչտօնատան այն ծովակալն և պատերազմական պաչտօնատան այն զօրավարն որոց պաչտօնն է զաղանի ծանօթութիւններ հաւաքել Անգլիոյ հաւանական թչնամիներուն ոյժերուն և չարժումներուն վրայ։ Ազատականաց կողմէ Մր. Ճէյմս Պրայս եւս ձայնակցելով Մր. Պալֆուրի, ըսաւ թէ ազգին վարիչներուն պարտքն է պատերազմը պատրաստել խաղաղութեան ժամանակ, յանկարծակիի չգալու համար պատերազմի ատեն։ Իսկ կուսակցապետ Սըր Հէնրի Քամպպել Պանըրմէն մերժեց Լորտ Ռոզպէրիի կարծիքը թէ Լորտ Քինչնէր մնայուն և անփոփոխելի անդամ ըլլայ սոյն զինուորական յանձնաժողովին. զի պէտք է որ օրուան Դահլիճը, իր ամէն ստորադաս մարմիններով, միչտ պատասխանատու ըլլայ Բարլամէնդին, և ո՛չ ոք, ո՛րքան ալ հեղինակաւոր, պէտք չէ որ գեր ի վեր ըլլայ խորհրդարանական հակակչռէն ու համարատուութենէն։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ. — Բրիտանական պետութեան առեւտրական Սենեակներու ընկերակցութիւնը Մարտ 5ին Լորտ Էվպըրիի (համբածանօթ գրագէտ Ճոն Լըպօք) նախագահութեան տակ տօնեց իր տարեկան հացկերոյթը։ Ֆրանս. դեսպան Մ. Քամպոն ալ ներկայ էր։ Լորտ Էվպըրի Ֆրանսերէն խօսեցաւ իր ճառը։ Ցիչեցուց այն բարեկամական կապերն որով միացած են Անգլիա և Ֆրանսա եւ թէ ինչպէս ընդունեցին զինք ասկէ երկու տարի առաջ՝ Բարիզի առեւտրական Սենեակները։ Նմանապէս յիչեց թէ անգլիացի ու ֆրանսացի զինուորները քով քովի կռուած են ի Խրիմ և ի Չինաստան։ Երկու ազգերը, աւելցուց, միեւնոյն նպատակներուն կ'հետապնդեն, ու մանաւանդ խաղաղութիւնը պահպանելու, և փառաւորեց զՖրանսա, որ յառաջ կը բերէ Ֆէնըլոնի, Պօսիւէի, Մոլիէրի պէս հանճարներ։ Ճառը վերջացնելով ըսաւ Մ. Քամպոնի.— «Աւելորդ է ուրիշն հաւաստել ձեզ թէ մեր մեծ փափաքն է անվթար պահել այն բարեկամական կապերն որ կ'միացնեն զԱնգլիա այն երկրին, զոր ո՛րքան պատուաւոր կերպիւ կ'ներկայացնէք յանձին ձեր։ Ձեզ կ'առաջարկեմ, Տեա՛րք, բաժակ պարպել Մ. Քամպոնի կենաց և Ֆրանսայի բարգաւաճման և բարեպաստութեան, որուն սրտով կ'բաղձանք։

Մ. Քամպոն պատասխանելով այս ճառին, չնորհակալութիւն յայտնեց նախագահին՝ ազնուութեանն համար որով ֆրանսերէնով ուղղեց իր խօսքերը, յետոյ աւելցուց, «Կատարելապէս ճչմարիտ է թէ իմ առաջին պարտականութիւնս կը նկատեմ աչխատիլ զարգացնելու համար մեր երկու երկիրներուն մէջ եղած բարւոք յարաբերութիւնները։ Մինակ Անգլիա և Ֆրանսա չէ որ չահ ունին իրարու բարեկամ ըլլալով, և իրարու օգնելով իրենց առեւտուրով, ճարտարարուեստով ու ելմտապէս։ Աչխարհի չահն ալ զայս կը պահանջէ, և նո՛յն իսկ յառաջդիմութեան գաղափարին փառքն պիտի ըլլար իրարմէ հեռացնել ջանալ այս երկու ազգերը, որք չատ անգամ միացած են իրարու արդարութեան սկզբունքներն յարգել տալու համար աչխարհիս մէջ։ Կ'ներկայացնէք դուք՝ ինչ որ կայ ամէնէն կենդանի, և կրնամ ըսել՝ Մեծն Բրիտանիոյ չահերուն համար ամէնէն առնչողական իրը. ո և է անձէ աւելի աղէկ գիտէք թէ ինչ մեծ խառնակութիւն պիտի ձգէր աչխարհի մէջ երկու ազգերու մէջ յառաջ եկած ո՛ և է թիւրիմացութիւն։ Ազգերն հետզհետէ աւելի նուազ կերպով կ'վարին անձնասիրական ու եսական զգացումներէ, հետզհետէ աւելի քիչ զհետ կ'անդին արկածներու։ Գիտեն թէ ինչ պիտի կորսնցնեն անոնց մէջ, առանց որոչապէս տեսնելու, թէ ինչ կրնան չահիլ անոնցմէ։ Անհրաժեչտ կ'զգան իրենք զիրենք իրարու, եւ ձգտում մ'ունին, որ օր ըստ օրէ աւելի եւս կ'չեչտուի, իրարու միանալու՝ մեծ ձեռնարկութեանց ժամանակ։ Ո՛չ մէկ էական կէտ կ'տեսնեմ որ կարենայ բաժնել իրարմէ Ֆրանսան ու Անգլիան, ընդհակառակն, կարեւոր չահեր կ'տեսնեմ, որք կրնան ու պէտք է որ իրարու միացնեն այս երկու ազգերը։ 80 միլիոն անգլ. ոսկիի փոխանակութիւն ունինք իրարու հետ։ Մեր վաճառականութիւնն ու ճարտարարուեստներն իրարու հետ մրցում չեն ըներ, բաց որում նոյնը չեն մեր երկիրներու արտադրութիւնները, և մեր առեւտրական հրապարակները չիփոթ վիճակ մը պիտի ստանային, եթէ իրարու չօգնէին։ Ասոնք անանկ ճչմարտութիւններ են որ ո՛չ ոք կ'անգիտանայ գործի աչխարհին մէջ, և պէտք է դիմագրաւել հանրային կարծիքի ինչ ինչ խառնուածներուն, եւ ո՛րչափ աչխատինք ասոր, չափազանցած չենք ըլլար. իրարու պէտք ունինք՝ Ծանր անհամաձայնութիւններու համար ո և է առիթ չկայ, և միչտ պէտք է ջանանք ճաչտեցնել մեր չահերն ու ներչնչել փոխադարձ յարգանքի զգացումներէ. ասանք միայն կրնան արժանի ըլլալ այս երկու մեծ ազգերուն։ Դուք ամէնէն աւելի յարմար էք մչակելու այս քաղաքականութիւնը, զոր երազողք կրնան անարգել և չահու քաղաքականութիւն կոչել, բայց իրապէս խաղաղութեան, իմաստութեան, և ճչմարիտ յառաջդիմութեան քաղաքականութիւն մ'է։ Այս ընկերութիւնը կազմող այնքան նչանաւոր անձնաւորութեանց մէջ երջանիկ կ'զգամ ինքզինքս ողջունելու ձեր նախագահը, որ անուն մը չինած է ի Ֆրանսա իր պայծառ աչխատասիրութիւններով, և զոր մենք կ'համարինք մեր գրագէտներէն, որովհետեւ Լորտ Էվպըրի քաջածանօթ է մեր լեզուին և գիրք մը հրատարակած է ֆրանսերէնով։ Ամէնէն համոզուած ու օգտակար գործիչներէն մէկն է մերձաւորութիւն մը գոյացնելու, որ ա՛յնքան մեծ արդիւնքներ կրնայ տալ, ու բաժակս վեր առնելով ի պատիւ իրեն, կ'պարպեմ զայն ի պահպանութիւն և ի զարգացումն բարւոք յարաբերութեանց՝ ընդմէջ երկուց երկրաց։» Սրտագին արտասանուած այս խօսքերը միահաղոյն և երկարատեւ ծափահարութիւններով ողջունուեցան։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍԵՐ կողմէ ծովակալ Հոլմանի ուղղուած նամակին հեղինակութեան համար Հարաւ. Գերմանիոյ թերթերուն մէջ սա տեղեկութիւնները կան։ Տէլիչի Բաբէլն և Աստուածաչունչ խնդրոյ խօսութեան վրայ Վիլհէլմ Կայսեր նամակին իր պատմութիւնն ունի, որ զուրկ չէ կարեւորութենէ։ Երբ պերլինցի բրօֆէսօրին դէմ եղած կրօնասիրական յարձակումը, մանաւանդ Կայսերական այցելութենէն ետքն, իր բարձր աստիճանին հասաւ, և չատ կողմերէ դիտողութիւններ եղան Կայսեր, Վիլհէլմ Բ. որոչեց, թիւրիմացութեանց տեղի չտրուելու համար, en grand style հրատարակութիւն մ'ընել։ Այս նպատակաւ երեւելի աստուածաբաններէ պահանջուեցաւ այդ մասին մէյմէկ նախագիծ—օրինակներ ղրկել վեհապետին (Հարնաքի ալ հրաւէր եղած էր, բայց ան չէր ընդունած)։ Այդ օրինակներէն, որք թուով երկու հատ էին, Կայսրն ընտրեց զայն որ համաձայն էր իր համոզմանց և նամակի ձեւով մը ղրկեց ծով. Հօլմանի, թեթեւ բայց կարեւոր փոփոխութիւններ ընելով անոր վրայ որք սակայն յոյժ յատկանչական են նամակագրին համար։ Փոփոխութեանց կարեւորագոյնը սա է որ Կայսրը Մեծն Կարոլոսն ու Մեծն Վիլհէլմ ալ մոցուց այն անձանց կարգին մէջ որոց յայտնուեցաւ Աստուած ըստ Ս. Գրոց։

Այս խնդրոյ մասին նոյն Տայկէ Ալկէմայնէ Ցայտունկ թերթին ամէնէն վերը սա հետեւեալ կէս—պաչտօնական յայտարարութիւնը կայ։ «Բոյնէշ—Վեստֆէլիշէ—Ցայտունկ լրագրին ալ մեծ հաճութեամբ կ'հաստատէ ընկերվարական Մէնչէնէր Բօստ լրագրին այն կարծիքը թէ Նորին Վեհափառութիւն Կայսր—Թագաւորն ինք անձամբ խմբագրած չէ Բաբէլին և Աստուածաչունչ խնդրոյ մասին ծովակալ Հոլմանի ղրկած նամակը։ Մեք կը հաստատենք թէ այդ կարեւոր և նչանակալից նամակին սկիզբէն մինչեւ վերջին բառը Ն. Վեհափառութեան գրչէն եղած է, որ ուրիչ ո և է կողմէ գրուած օրինակէ մը օգտուած չէ։ Արդէն խնդրոյն պարագաներուն վրայ տեղեկութիւն չունեցողն իսկ երբ ուչադրութեամբ կարդայ ամէն մէկ նախադասութեան մէջ Կայսեր անձնական համոզմանց դրոչմը կրող այդ յայտնութիւնը և դատէ զայն իր ներքին և արտաքին հանգամանքներէն, դիւրաւ կ'համոզուի թէ սխալ է ընկերվարական թերթին կողմանէ մէջ բերուած կարծիքն, որուն ինչ նպատակաւ եղած ըլլալը դժուար չէ գիտնալ։»

ԿՂԵՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ի ԳԵՐՄԱՆԻԱ. Հռոմէն կ'գրեն թէ՝ Դրեվի Բօրում եպիսկոպոսն հրահանգ ընդուներ է Վատիկանէն թէ առէջ ետքն իբրեւ առաջնորդ եկեղեցւոյ իր պարտաւորութեանց կատարման մէջ նկատողութեան առնէ պետութեան պահանջումները։ Դարձեալ Հռոմէն կ'ծանուցանեն թէ Քոբ արքեպիսկոպոսը Քօլոնի եպիսկոպոսին հետ ունեցած մէկ տեսակցութեան պահուն համոզած է զայն թէ բացարձակապէս պէտք է իր չըջաբերականին այս կամ այն եղանակաւ յետս կոչել։ Ամէն գերման եպիսկոպոսներն ալ տհաճութեամբ կ'նային Քօրումի ընթացքին։ Քոբ եպիսկոպոսին ջանքերն այս խնդրոյն մէջ, պապական վարչութեան կողմէ ընդունած հրահանգներուն արդիւնքն ըլլալ կ'կարծուի։

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ. — Նանսիի մէջ «Բարի Հովիւ»ի մայրապետական վանքին դէմ բացուած դատին երեւան ելած գեղծումները պատճառ եղան որ տարիներէ ի վեր արտօնուած Բարի Հովիւ միաբանութիւնը դադրի գոյութենէ։ Արմատականք կ'պահանջեն կառավարութենէն որ Կրօնական Միաբանութեանց օրէնքին մէջ յաւելուած մ'ըլլայ սա՛ մաքով.— «Կրօնական Միաբանութեանց պատկանող անձինք իրաւունք չունին վարել արհեստական կամ ճարտարական հաստատութիւններ, վաճառատուններ, որբանոցներ, աչխատանոցներ։»—Այս յօդուածին յաւելմամբ, վանքին արհեստական ընդարձակ գործունէութիւնը դադրեցաւ։ Թէ ինչ էր այդ գործունէութիւնը.—Օր. Լըքումնէի կողմէ «Բարի Հովիւ» մայրապետական վանքին դէմ բացուած դատին մէջ երեւան ելաւ այդ, որուն պատմութիւնը սա՛ է։—«Բարի Հովիւ»ը Ֆրանսայի մէջ 221 աչխատանոց ունի որք եօթն հազար մայրապետներէ կ'կառավարուին և որոց մէջ 48,000 աղջիկ կ'աչխատին։ Ասոնց ամէնքն ալ դեռ անչափահաս աղջիկներ են և իրենց մանկութեան ատեն դրուած են այդ աչխատանոցներուն մէջ աչխատելու համար։ Նանսիի եպիսկոպոսն իսկ կ'վկայէ թէ այդ խեղճ որբուհիներն վանքին աչխատանոցներուն մէջ առանց վարձքի օրական մինչեւ 16 ժամ աչխատելու պարտաւորուած են, Բարիզի Նորաձեւութեանց մեծ տուներու և մանաւանդ բաղէս Պոն Մարչէի և Լուվրի կողմէ այդ վանքին եղած յանձնարարութիւնները պատրաստելու համար։ Նանսիի Դիւրինօղ եպիսկոպոսը կ'ըսէ թէ այդ որբուհիներուն աչխատանքն է որ վանքն այսչափ հարստացաւ, թէ բովանդակ Ֆրանսայի գործարանաց վարիչներու մէջ նմանը չկայ այս մայրապետներուն անգթութեան, որք յանուն գթութեան պատսպարելու ընդունած այդ որբուհիները չարաչար կ'չահագործէին։ Նանսիի եպիսկոպոսին այս ըսածները կ'պատասխանեն «Բարի Հովիւ»ին ամէն աչխատանոցներուն ալ։ Ի պատիւ ֆրանսական եպիսկոպոսութեան պէտք է ըսել նաեւ թէ Նանսիի Դիւրինօղ եպիսկոպոսն որ «Բարի Հովիւ» Միաբանութեան այս ամէն գեղծումներն յատուկ յիչատակագրով մը հաղորդած է ի Հռոմ, իր այդ ձեռնարկին մէջ հինգ արքեպիսկոպոսի և 15 եպիսկոպոսներու աջակցութիւնը վայելած է։ Ասիկա հաստատուած է Օր. Լըքումնէի դատով։ Օր. Լըքումնէ 8 տարեկան եղած ատեն Նանսիի վանքը մտած է, և իր հազարաւոր որբուհի ընկերակիցներուն հետ 20 տարիէ ի վեր կ'աչխատէր վանքին աչխատանոցին մէջ առանց վարձքի։ Վերջերս տեսողութիւնը տկարանալով, վանքին աչխատանոցին ճերմակեղէնի բաժնին կարերը չկրցաւ կարել և ասոր համար վանքէն վռնտեցին. քիչ ետքն ալ բոլորովին կուրնալով վերջին ծայր թչուառութեան մատնուեցաւ։ Օր. Լըքումնէ դատ բացաւ և դատարանը 10,000 ֆր.ի հատուցման դատապարտեց Նանսիի «Բարի Հովիւ»ը, օրիորդին ցարդ տուած աչխատանքին և կուրութեանն համար։ Լսուած վկայութիւններէն որք չաբաթներ տեւեցին, հաստատուեցաւ թէ վանքին աչխատանոցներուն մէջ չատ անգթութեամբ կ'վարուէին որբուհիներուն հետ, թէ տրուած սնունդը չէր համապատասխաներ աչխատանքին, թէ առողջապահական զգուչութեանց հոգ չէր տարուեր, թէ որբուհիներն օդէ, լոյսէ և բժչկի խնամքէ զուրկ թողուած էին, թէ որբուհիներու մէջ մահերու թիւը չատ էր, թէ մայրապետք իրենց մեծամեծ չահերը ծածկելու համար եպիսկոպոսին կողմէ կազմուած քննիչ յանձնաժողովին կեղծ տետրակներ ներկայացուցեր են, թէ իրենց կալուածներն ամէն տարի կ'աւելնային, և միլիոններ դիզած են։ Այս գեղծումները նախապէս Նանսիի եպիսկոպոսն երեւան հանեց և ինք պատճառ եղաւ որ Արդարութիւնը միջամտէ և վերջ մը տայ վանքին այս հակամարդկային վիճակին։ Ինք եպիսկոպոսն է որ երկար ատենէ ի վեր կ'ջանար և այս անգամ յաջողեցաւ լուծել այս և ասոնց նման միաբանութիւնները, որք չատ իրաւամբ իբրեւ ճըչմարիտ բանտեր կ'համարուին։

«ԼՈՒՐՏԻ ՔԱՐԱՅՐ»Ի ՀԱՅՐԵՐՈՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. -Ֆրան. Կառավարութիւնն արտօնութիւն չտուաւ, ինչպէս գրեցինք, Լուրտի Քարայրին Կրօնական Միաբանութեան, որ այժմ չարտօնեալ 54 Միաբանութեանց մէջ կ'գտնուի։ Այդ Հայր՛երը պիտի մեկնին այդ Ս. Քարայրէն, հրաչագործ աղբիւրէն և իր չրջակայ վայրերէն զորս իրենք չէնցուցին, բայց Լուրտը դարձեալ պիտի մնայ ինչ որ էր, եթէ կառավարութիւնը չարգիլէ բանակումներու ուխտագնացութիւնը, ինչպէս ըրաւ Նաբոլէոն Գ. և չփակէ աղբիւրը։ Ու այժմ կարելի է ենթադրել թէ միայն վարիչները պիտի փոխուին։ Լուրտի Քարայրին Հայրերը մէկ ճիւղն են Անարատ Ցղութեան Միաբանութեան որուն կեդրոնատեղին է Կառէզօն (Վերին Պիրենեանք)։ 1835ին Դարպի եպիսկոպոսն հիմնեց այդ Միաբանութիւնը։ Վեց ճիւղեր ունի որոնց հինգը Վերին Պիրենեանց գաւառին մէջ բաժնուած են (որոց մէկն է Լուրտինը) և մէկն ալ Արեւմի մէջ կ'գտնուի։ Կանոնագրին համաձայն Անարատ Ցղութեան այդ Հայրերը գլխաւորապէս ուխտատեղիներու մէջ ծառայելով, քարոզելով և երիտասարդութիւնը կրթելով կ'զբաղին։ Այդ Կարգին ընդհ. գործակալն Հռոմի մէջ կ'բնակի։ Վերին Պիրենեանց քաղաքապետն իր պաչտօնագրին մէջ կ'գրէ թէ «Անարատ Ցղութեան Հայրերն ամբողջ նահանգին մէջ մեծ ազդեցութիւն ձեռք բերած են քաղաքական խնդրոց մէջ։ Բայց Լուրտի մէջ մեծ զգուչութեամբ կ'վարուին, վախնալով որ չմնասեն Քարայրի Հաստատութեան կարեւորագոյն չահուց։ Հաստատուեցաւ որ վերջին տարիներու ընտրական պայքարներու մէջ այս միաբանութիւնն իր Հայրերուն ձեռքով և կրթական պատրուակի տակ մեծ դեր խաղաց։ Պարտ կ'համարիմ յաւելուլ թէ այս միաբանութեան արտօնութիւն չտրուելով՝ մեծ դժուարութեան չի մատնուիր Լուրտի ուխտատեղւոյն վարչութիւնը զոր կարելի է յանձնել մեծ վանքին կրօնաւորաց Դարպի եպիսկոպոսին ուղղակի և անմիջական հսկողութեան տակ։ Լուրտի ուխտատեղին հաստատեց նախ և առաջ Բէյրամալ Աբբան, որ չատ դրամ հաւաքեց և հոյակապ եկեղեցւոյ մը չինութեան սկսաւ. բայց Անարատ Ցղութեան Միաբանութիւնը ճանչնալով Լուրտի կարեւորութիւնն ու յաջողութիւնը, իր միաբաններէն Հ. Սէմբէնը Դարպի եպիսկոպոսին ղրկեց և անոր ազդեցութեամբ յաջողեցաւ Լուրտի վարչութիւնն ինք ստանձնել։ Իր միաբաններէն բաղկացեալ նոր ճիւղ մը հաստատեց Լուրտի մէջ որ այժմ Քարայրին Հայրերը կ'կոչուին։ Հ. Սէմբէ զանազան դարձուածքներով Բէյրամալ աբբային ձեռքէն կորզեց եկեղեցւոյ աւարտման համար անոր պահած դրամը։ Այդ եկեղեցին աւերակ վիճակի մէջ է այսօր։ Բայց ասոր փոխարէն ուրիչ մեծ եկեղեցի մը և փոքր մատուռ մը և անոնց քովն ալ հիւանդանոցներ և օթեւաններ կան չինուած, որք Քարայրի Հայրերուն կ'պատկանին։ Բէյրամալ աբբան վերջին ծայր խեղճութեան մէջ մեռաւ և կ'ըսեն թէ իր հոգեվարքին մէջ չուզեց երեսն տեսնել Հ. Սէմբէին, որ գացած էր այցելել իրեն։ Միաբանութիւնը 35,500 ֆրանք արժող 4—5 հեկտար հողի համար տուրք կուտայ միայն։ Բայց կ'ըսուի թէ զանազան կտակներէ իրեն անցած կալուածները բազմաթիւ են։ Ըստ պաչտօնական քննութեան, 80 հեկտար տեղ ունի որ կ'արժէ իբր հինգ միլիոն ֆրանք։ Հակառակ այս մեծ ստացուածքին, Քարայրի Հայրերը միայն 315 ֆրանք տարեկան տուրք կուտան։

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՑ կուսակցութեան վարիչները Մարտ 4ի գումարման մէջ որոչեցին թէ պէտք է որ Վալտէք վստահութեան խնդիր դնէ Միաբանութեանց գործին մէջ, վասն զի կուսակցութիւնը վախ ունի որ ժողովրդականաց Միութեան անդամներն, որոց պետն է Մ. Էդիէն, Դահլիճին որոչմանց հակառակ քուէ տան։ Արմատականաց խումբն որոչեց Կառավարութենէն պահանջել նաեւ փակել Նանսիի «Բարի Հովիւ» վանքը, որ անցեալ օր 10,000 ֆր.ի հատուցման դատապարտուեցաւ, կար կարող աղջիկ մը չարաչար աչխատցնելուն համար։

Բուլէ, 5 Մարտ.— Օրլէանեան թերթերը կ'ծանուցանեն թէ Օրլէանի դուքսն Եորք Հառուղի մէջ իր երեւելի կուսակիցներուն հետ խորհրդակցութիւն մը ունենալով, օրլէանեան Երեսփ. կուսակցութեան կազմակերպութեան վրայ որոչումներ տրուած են։

ԵԼԻԶԷԻ ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ Մարտ 6ին գումարուած Նախարարաց Խորհուրդին մէջ Վարչապետ Մ. Քօմպ ըսաւ թէ մտադիր է կարել Բէրիկէօ եպիսկոպոսին թռչակը, որուն Մեծ Պահոց առթիւ գրած հովուական թուղթին պարունակութիւնը թչնամական նկարագիր մ'ունի թէ՛ Կառավարութեան և թէ Բռնքորտայի դէմ։ Պատերազմական նախարար Զօր. Անտրէ զեկոյց Խորհուրդին թէ պետական զինագործարանէն չատ գործաւորներ պիտի ճամբէ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ ՈՅԺԸ. — Ծերակոյտին և Երեսփ. Ժողովին յանձնաժողովները, Մարտ 3ի երեկոյին հաւաքուելով, համաձայնեցան օրինագծի մը վրայ, որով մարտանաւերուն վրայ պիտի աւելնան երեք զրահաւոր՝ 16,000 թօնօ տարողութեամբ, 2 զրահաւոր՝ 13 հազար թօնօ տարողութեամբ, երկու դպրոց—մարտանաւ, և մէկ չոգենաւ, նաւային ակադեմիոյ աչակերտները պիտի աւելնան և նաւաղներու վրայ ալ 3000 հոգի պիտի աւելնան և ռազմամթերք գնելու համար ալ 1 ու կէս միլիոն տոլարի վարկ մը պիտի բացուի։ Այդ օրինագիծը կ'արտօնէ նաեւ աւելցնել սպաներու թիւը։ Ութ միլիոն տոլարի գումար մը կ'պահանջէ։ Այս նոր քաղաքականութեան ընդունելուն գլխաւոր պատճառը Նախագահն է որ միչտ կ'պնդէ թէ զօրաւոր նաւատորմ մը պէտք է Մընրոյի վարդապետութիւնը քալեցնելու համար։

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ.—Ճապոնական ընդհ. ընտրութիւնք խաղաղութեամբ կատարուեցան։ Մինչեւ Մարտ 4 ընտրուեցան 183 Սէյիւու—Քէնանք, 92 յառաջդիմական, 14 ծառայական քաղաքականութեան կուսակիցներ, 74 անկախ։ Մինչեւ հիմա ընդդիմադիր կուսակցութիւնը 275 անդամ ունի։ Կ'հարցուի թէ ինչ դիրք պիտի բռնէ հիմա Դահլիճը, քանի որ իրաւախոհութիւն մը գոյացնել համար եղած բոլոր ջանքերն ապարդիւն անցան։ Ծերակոյտը կ'ընդդիմանայ կուսակցութիւններէ առնուած դահլիճներու դրութեան։

ՌՈՒՍ ԶՐԱՀԱՒՈՐՔ [illegible] և [illegible] Ադէն ժամանեցին, ուր կ'սպասուին Ռուսիոյ Ծ. Արեւմտեան նաւաբաժնին միւս զրահաւորներն ալ, որոց ամէնքը մէկէն Պարսից ծոցն երթալով, պիտի այցելեն պարսկական նաւահանգիստները, և յետոյ պիտի ուղղուին դէպ ի Չին, Ճափոն եւ Քորէա։

ԹԷՐ—ՆԷՕՎԻ (ՆԻՒՈՒ—ՖԱՈՒՆՏԼԷՆՏ) ԽՆԴԻՐԸ.— Սէն—Ժան ու Թէր—Նէօվէ կ'հեռագրուի Թայմզի թէ Խորհրդարանը Մարտ 5ին պիտի սկսի գումարելու իր նիստերը։ Կառավարչին ճառը կարեւոր ծրագիր մը տալ կ'խոստանայ։ Կառավա-

րութիւնը կ'զբաղի սա խնդրով թէ պէ՞տք է դուրս հանել ամերիկացի ձկնորսները, քանի որ Միացեալ Նահանգաց Ծերակոյտը դեռ չէ վաւերացուցած Պոնտ—Հէյի դաշնագիրը։

ՔՐԻՍԴԻԸՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, քոյր Էտուարտ Է.ի, Աֆրիկէ պիտի երթայ, և ի Բրետորիա պիտի այցելէ իր որդւոյն Շլեզվիկ—Հոլշթայնի Քրիսդիըն Վիքթորիընի գերեզմանին, որ պատերազմին ատեն հոն մեռած էր ջերմէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիկին ԻՒՄՊԷՌ իր հարցաքննութեան ատեն ինքզինքը վաշխառուներու զոհը, քաղաքականութեան մարտիրոսուհին ցոյց տուած էր։ Անցեալ Եշ. հարցաքննիչ դատաւոր Մ. Անտրէ նոր հարցաքննութիւն մ'ըրաւ, և այս անգամ տիկինը կարծեցնել ուզեց թէ նախարարութիւնն ամէն միջոց ի գործ կ'դնէ զինքն անպարտ հանելու համար։ Բայց երբ Մ. Անտրէ զինքն տուաւ թէ այդ մասին մատղեած ամէն մաքիավելեան նպատակներուն վրայօք տեղեկութիւն տրուած է իրեն (փաստերով). Տիկինը պատասխանեց.— Իմ խեղճուկ հարցաքննիչ դատաւորս, կ'տեսնեմ որ ծաղրած են ձեզ։ Ասոր վրայ դատաւորին և Տիկին Իւմպէռի միջեւ սա խօսակցութիւնը տեղի ունեցաւ։

Դատաւորը. — Դահլիճին ո՞ր անդամը տեղեկութիւն ունէր ձեր Մադրիտ գտնուելէն։ Տիկ. — Դատավարութեան ատեն պիտի տամ անոնց անունները։ — Թերեւս դեսպան Մ. Բագնօղին ակնարկել կ'ուզէք։ — Ես և խմբինքս Մադրիտի մէջ շատ անգամ հանդիպեցանք Մ. Բագնօղին։ — Բայց այդ չի ցուցներ թէ ան ձեզ կ'ճանչնար։ — Մ. Բագնօղը շատ լաւ կը ճանչնայ մեզ։ 1880ին յաճախ իմ երեկոյթներուս կուգար։ — Բայց երբ նախարարութիւնը ձեր գտնուած տեղը գիտէր և չէր ուզեր ձերբակալել ձեզ, դուք ինչո՞ւ համար կ'ծածկէիք զձեզ։ — Անծանօթ մասնութենէ մը խոյս տալու համար։ Եթէ նախարարի մը ձախաւերութիւնը չըլլար, դեռ մեզ հոն պիտի ըլլայինք։ — Դուք կ'ուզէք որ դատը քաղաքական գործի մը վերա՞ծ անէ։ — Արդէն շատ գիւտակներ բռնուած են գործիս մէջ։ — Որո՞նք են անոնք։ — Ես անոնց անուններն ալ անունները դատավարութեան ատեն պիտի տամ։ — Եթէ գիտէիք թէ կառավարութիւնը չէր ուզեր ձերբակալել զձեզ, ինչո՞ւ համար Մադրիտի հեռաւոր մէկ փողոցին մէջ բնակիլ որոշեցիք։ — Կ'երեւայ թէ, սիրելիս, դուք Մադրիտը չէք ճանչնար։ Ձեր փողոցը Մադրիտի ամենաշքեղ փողոցներէն մէկն է. իշխանուհիներ կ'բնակին հոն։ Կառավարութիւնը գիտէր թէ ի՞նչ կ'ընէինք մեք. չորս ոստիկաններ քայլ առ քայլ մեզ կը հետեւէին։ Անոնց մէկը կոծիծ մ'ունէր քիթին վրայ, միւսը՝ խարտեաշ գիսեցիկ պեխեր, երրորդը՝ շատ մեծ էր և ծնօտամորուս մ'ունէր, և չորրորդն ալ ճիշտ ձեզ կ'նմանէր, տէր դատաւոր։

Այսպէս Տիկին Իւմպէռ Մադրիտի խորհրդաւոր ոստիկանաց մանրամասն նկարագիրն ըրաւ։ Դատաւորին գործին շատ եկաւ այս պարագան, վասն զի դեռ մէկ քանի օր առաջ Տիկինն ըսած էր թէ անձերու կերպարանքն յիշելու մասին շատ տկար էր իր յիշողութիւնը, և թէ չէր կրնար Քրոֆորտ եղբարց լեր ի վերոյ մէկ նկարագիրն ընել։

Մադրիտի ֆրանս. դեսպան Մ. Բագնօղը կ'հերքէ Տիկին Իւմպէռի ըսածները և կ'ըսէ թէ ո՛չ զանի կ'ճանչնայ և ոչ ալ անոր Մադրիտ գտնուելէն տեղեկութիւն ունէր։

ԼՈՒԻԶ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Աւստրիոյ, Պաւիերայի և Սաքսոնիոյ ոստիկանութիւններուն հրաման ղրկուած է Վիեննայէ, Միւնիխէ և Տրէզտէնէ որ Մ. Ժիրօն այս երեք երկիրներուն սահմանէն ներս կոխելուն պէս ձերբակալուի։ Առ իշխանուհին ուղղած քանի մը նամակներն ալ իրեն ետ ղրկուած են՝ ծանուցանելով թէ այլ եւս իշխանուհին նամակ չընդունիր իրմէ։ — Այս անգամ, պէտ վարժապետը ձոն եղած կ'թուի։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՊԱՐՆԱՐՏ ԹՈՒԼԷՃԻՆ մէկ միլիոն տոլար նուիրեց կրթական մէկը, որ չուզեր իր անունն յայտնել։ Այս դրամով պիտի գնուին կրթարանին քովը գտնուող տուներն ու պարտէզները, և պիտի կցուին շէնքին։

ՁԻՈՒ ՎՐԱՅ ԳՐԱՒԻ գումարներէն առնուած տուրքն աւելցաւ Ֆրանսայի մէջ անցեալ շաբաթէն ի վեր։ 100ին մէկ յաւելում եղաւ տուրքին վրայ, որով երկուք ու կէս միլիոն ֆր. կ'գոյանայ տարեկան, որ պիտի յատկանայ Ֆրանսայի գիւղային համայնքներուն առողջութեան, մանաւանդ մաքուր ջուր հայթայթելու անոնց։ Ամբողջ տուրքն որ այս աղբիւրէն կը գոյանար, քանի մը միլիոն ֆր.ի կ'հասնէր արդէն, որ սահմանուած էր գաւառներուն մէջ ձիերուն տեսակներն ազնուացնելու։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՅՐԱՄԻ ՏՕՆԸ. — Քուրպան Պայրամի տօնին առթիւ, Վեհ. Կայսրն երէկ ժամ 2ին միջոցները քառաձի փառաշուք կառքով մը, որուն մէջ Իր դէմը նստած էին Կայսերազուն իշխան Պիւրհանէտտին էֆ. և Սպարապետ Ալի Րիզա փաշա, Պէշիքթաշի Սինան—փաշա մզկիթը գնաց հանդիսաւոր թափորով, և Պայրամի աղօթքը կատարելէ վերջ, ժամ 2½ին դարձաւ Տոլմա—Պաղչէի Պալատը։ Նորին Կայսերական Վեհափառութիւնը, Պալատան ներքին մեծ սանդուղին առջեւ կառքէն վար իջնելով, կատարեց զոհման արարողութիւնն եօթն խոյերու (քօչ) որոց գլուխը լուացուած ու սանտրուած և եղջիւրները բոլորովին ոսկեզօծուած էին, և վիզերնին կ'կրէին մետաքսեայ սիրուն ժապաւէններ։ Պալատական աստիճանաւոր մը ոսկեայ դանակ մը, արծաթեայ ափսէի մը վրայ, մատոյց Վեհ. Կայսեր որ դանակին սայրը թեթեւ մը քսեց խոյերէն մէկուն վիզին, և ապա խոյերը մորթուեցան։ Ցետոյ Կայսերական Պալատ մտաւ և Իր յարկաբաժինը գնաց, ուր պահ մը հանգիստ առաւ։ Ապա մտաւ Գահոյից մեծ Դահլիճը, ուր նուիրապետական կարգաւ շարուած էին բոլոր քաղաքային, զինուորական ու կրօնական աստիճանաւորներն և պաշտօնատարներն, որք աջահամբոյրի արարողութեան ներկայ գտնուելու աստիճանն ունէին։ Նորին Կայսերական Վեհափառութիւնն երբ Իր Գահոյից վրայ բազմեցաւ, նախ Նագիպ—իւլ—էշրաֆ էֆէնտին, Դահլճին մէջտեղն յառաջանալով, ջերմագին բարեմաղթութիւններ ըրաւ Կայսերական արեւշատութեան համար։ Աջահամբոյրի արարողութիւնն այն ատեն սկսաւ մինչ Կայսերական նուագախումբն ախորժալուր եղանակներ կ'ածէր։ Նախ Մեծ—Եպարքոս Բարձր. Ֆէրիտ փաշա յառաջացաւ ոսկեփայլ ժապաւէնն համբուրելու։ Ցետոյ կարգաւ համբուրեցին նախկին Մեծ—Եպարքոսները, նախարարները, անպաշտօն Վէզիրները, Միւշիրները, ծովակալները և դեր—ծովակալները, Ֆէրիգ և Լիվա փաշաները, բոլոր բարձր պաշտօնատարները մինչեւ Պալայի և Ուլայի Ա. և Բ. աստիճան ունեցողները։ Համբուրողները կարգաւ կ'անցնէին Ն. Կայսերական Վեհափառութեան առջեւէն և դահլիճէն դուրս կ'ելնէին։ Այն ատեն կարգն եկաւ կրօնական պաշտօնատարներուն և աստիճանաւորներուն, որք յառաջացան առաջնորդութեամբ Շէյխ—իւլ—Իսլամ էֆ.ին։ Երբ Ն. Բարձրութիւնը դահլիճին մէջտեղն եկաւ, Վեհ. Կայսրն Իր Գահէն ելաւ։ Շէյխ—իւլ—Իսլամ էֆէնտին բարեմաղթական աղօթք մը արտասանեց, և ապա տողանցութիւնն սկսաւ, և կրօնականք մի առ մի համբուրեցին Գահոյից ոսկեփայլ ժապաւէնը։ Երբ աջահամբոյրի արարողութիւնն աւարտեցաւ, Վեհ. Կայսրն առանձնացաւ Իր յարկաբաժինը, ուր ընդունեց Կայսերական Պալատան քաղաքային ու զինուորական պաշտօնատարներուն ու աստիճանաւորներուն շնորհաւորական մեծարանքները։ Արարողութիւնը վերջացած ըլլալով, Ն. Կայսերական Վեհափառութիւնը ժամ 5½ին Եըլտըզի Պալատը վերադարձաւ նոյն հանդիսաւոր թափորով որով եկած էր։

—Աջահամբոյրի արարողութիւնը դիտելու համար, Կայս. Գահոյից Դահլճին վերնատունն ընդունուած բարձրաստիճան անձնաւորութեանց մէջ կ'տեսնուէին ֆրանսական դեսպան Մ. Բօնսդան, Ա. Թարգման Մ. Ռուէյի հետ, պարսկական դեսպան իշխան Միրզա Րիզա Խան, ամերիկեան դեսպան Մր. Լիշման, սերպիական դեսպան Մ. Սավա Կրուիչ, ռումանական դեսպան Մ. Լահօվարի, օտար դեսպանատանց պաշտօնատարներէն ոմանք, և Ասկուդա—Վիքթորիա շոգենաւով եկող զբօսաշրջիկներէն ոմանք։ Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ Իր ողջոյնները հաղորդել անոնց, Արարողապետ Իպրահիմ պէյի միջոցաւ։

—Օտար դեսպանատանց Ա. Թարգմանները երէկ Եըլտըզի Կայսերական Պալատ երթալով, ի դիմաց դեսպաններուն, Պայրամի տօնը շնորհաւորեցին, և Արարողապետ Իպրահիմ պէյի միջոցաւ արժանացան Կայսերական մեծարանաց։

—Նոյնպէս հպատակ համայնքներու եկեղեցւոյ պետերը, Օսմ. Պանքայի և Քրէտի Լիոնէի, Անատոլուի և Ռումելիի երկաթուղեաց Տնօրէններն եւս երէկ Կայսերական Պալատ գացին ի շնորհաւորութիւն Պայրամի տօնին, և Սենեկապետներու միջոցաւ արժանացան Կայսերական մեծարանաց։

—Պայրամի հանդէսին մասնակցող օսմ. զինուորներուն երէկ բաշխուեցան ճէնէրալ ճէճէներ և շաքարեղէն։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ. — Աթէնքի լրագիրք գոհունակութեամբ կ'ծանուցանեն թէ Թուրքեհէլլէն առեւտրական դաշնագրին բանակցութիւնք աւարտած են, և դաշնագիրն ի մօտոյ պիտի ստորագրուի, երբ նորընտիր դեսպան Մ. Կրիբարիս Պոլիս ժամանէ։

—Հելլենական Իմպրոս լրագիրը, Խորհրդարանին մէջ եղմաստայի վիճաբանութեան պահուն, վարչապետ Մ. Տէլեանիսի յայտարարութեանց վրայ խօսելով կ'ըսէ թէ «Յունաստանի իրական շահը կ'պահանջէ առաւել եւս ամրապնդել Թուրքիոյ հետ իր բարեկամական յարաբերութիւնները, և Մ. Տէլեանիսի այս մասին ըրած յայտարարութիւններն Աթէնքի քաղաքական շրջանակներուն մէջ կատարեալ գոհունակութեամբ ողջունուած են։ Ռումելիի կայսերական նահանգներուն համար որոշուած բարենորոգմանց ծրագիրն ինչպէս որ Եւրոպիոյ բոլոր քաղաքական շրջանակներուն մէջ իրաւամբ գնահատուած է, Ռումելիի նահանգներուն իսլամ և ոչ—իսլամ բնակիչներուն ալ, առանց բացառութեան, գոհունակութիւն պատճառած է, որք իրենց արժանացած այս կայսերական շնորհին համար հրապարակաւ կ'յայտնեն իրենց երախտագիտական զգացումները, վերջերս երեւան եկած կարգ մը խռովարարներու ընթացքին դէմ թումբ մը քաշուած ըլլալուն համար»։

ՅՈՅՆԵՐՈՒՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ. — Սելանիքէ կ'հեռագրեն Աթէնքի լրագրաց թէ Ռումելիի նահանգներու յոյն հասարակութիւնք երախտագիտական ուղերձներ կ'պատրաստեն յառա Կայսերական Գահոյից մատուցանելու համար։ Կիւմիւլճինայի և Թասոսի Մետրապոլիտ Տ. Նիքոլայոս Կայսերական Պալատան Ա. Քարտուղարութեան հեռագիր մ'ուղղելով, Թասոս կղզիի Օրթոտոքս ժողովրդեան երախտագիտական զգացումներն յայտնած է կղզւոյն մէջ գործադրուած կարգապահական Տնօրէնութեանց համար։

—Իզմիրի Ամալթէա լրագիրը գոհունակութեամբ կ'ծանուցանէ թէ Կայսերական Կառավարութիւնը, որ իր Օրթոտոքս հպատակներուն միշտ դիւրութիւններ կ'ընծայէ իրենց կրօնական պարտականութեանց կատարման համար, Թենոսի Թանայիրն այցելող Ցոյներուն նորանոր դիւրութիւններ ընծայած է, հարկ եղած անցագիրները տալով և անցագրերէն 10ական ղշ. միայն ծախք առնելով։

—Ինչպէս յայտնի է, Աթէնքի համալսարանին օսմ. հպատակ ուսանողներէն ոմանք փափաք յայտնած էին օսմ. քոնսուլին մէջ ծառայելու, և իրենց այս փափաքն արժանացած էր Կայսերական հաւանութեան։ Աթէնքի օսմ. դեսպան Րիֆաթ պէյ վերջերս նոյն ուսանողներն հրաւիրելով, աւետեր է Կայս. բարեհաճութիւնը։ Ուսանողներէն Սիմիրիօդի էֆ. յանուն իր ընկերներուն, շնորհակալութիւն յայտներ և Վսեմ. դեսպանէն խնդրեր է իրենց երախտագիտութիւնը մատուցանել յառա Կայսերական Գահոյից։

ԿԱՅՍ. ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ. — Գերման դեսպան Պարոն Մարշալ ֆօն Պիպէրշդայն տկարութիւնն հիւանդ ըլլալով, Վեհ. Կայսրը, երէկ, աջահամբոյրի արարողութենէն վերջ, Արարողապետ Իպրահիմ պէյը գերմանական դեսպանատունը ղրկեց, Ն. Վսեմութեան ողջութիւնն հարցնելու։

—Ն. Կ. Վեհափառութիւնն երէկ Բ. քարտուղար և Սենեկապետ Իզզէթ փաշան ալ Ծովային նախարար Հասան փաշայի ապարանքը ղրկեց, Ն. Վսեմութեան ողջութիւնն հարցնելու։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ. — Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ Ա. Օսմանիէ պատուանշան շնորհել Կայսերական մաբեյնի Թիկնապահ Ֆէրիգ Ֆէհիմ փաշայի, Բ. Օսմանիէ՝ Սէր—Սէճճատէճի Օսման պէյի և Սէր—Ըպբբէտար Քեամիլ պէյի, Միրլիվայութեան աստիճան՝ մաբեյնի Թիկնապահ Գնդ. Խալիտ պէյի և հազարապետի աստիճան՝ դեր—հազարապետ Թարիք պէյի։

—Իմթիազի ոսկի և արծաթ շքանշան շնորհուեցաւ Խարիճիէի Խորհրդական Նաժում փաշայի և Բ. Դրան Իրաւագէտ Խորհրդական Մէհմէտ Ալի պէյի։

—Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ Բ. Օսմանիէ պատուանշան շնորհել Տրապիզոնի Մետրապոլիտ Տ. Քոնստանդինի, Բ. Մէճիտիէ՝ Էնկիւրիի Մետրապոլիտ Տ. Սոփրոնիոսի, Գ. Մէճիտիէ՝ Տըրասի Մետրապոլիտ Տ. Բրոքոփիոսի և Սինոդին Ա. քարտուղար արքիմանդրիտ Կիննատիոսի, և զանազան աստիճաններ՝ Պատրիարքարանի պաշտօնատարներէն ոմանց։

ՎԵՀ. ԿԱՅՍՐԸ բարեհաճեցաւ պատուանշաններ տալ Ցունաստանի Եորկիոս Թագաւորին, դահաժառանգ իշխանին և վարչապետ Մ. Տէլեանիսի (Իմթիազ, Իփթիխար և Օսմանիէ)։ Սէրվէդ

ՌՈՒՄԵԼԻԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ. — Կ. Պոլսէ կ'հեռագրեն Նայէ Ֆրայէ Բրեսէ լրագրին թէ Աւստրիոյ վարչապետ Մ. Քէօրպըրի և Մաճառստանի վարչապետ Մ. Սէլլի՝ խորհրդարանին մէջ՝ դրացի պետութեանց վիճակին վրայ արտասանած ճառերը Պոլսոյ քաղաքական շրջանակներուն մէջ գոհունակութիւն պատճառած են։

—Կայսերական Կառավարութիւնն հրաման ղրկած է Ռումելիի նահանգներուն Ընդհ. Քննիչ Հիւսէյին Հիլմի փաշայի, որպէս զի Ռումելիի նահանգներուն մէջ, գիւղերուն գիշերապահները պատուաւոր և պարկեշտ մարդոցմէ ընտրուին։

—Կ. Պոլսէ Մարտ 5 թուով հեռագրուած է Ֆրանսերէն Թան լրագրին թէ իտալական դեսպանատան զինուորական կցորդը, որ Ռումելիի նահանգներուն մէջ պտոյտ մը կ'կատարէ, Սերէզի կառավարչին հետ ունեցած տեսակցութեան մը միջոցին յայտարարեր է թէ նոյն նահանգներուն ամէն կողմը, Օսմ. հպատակները կատարեալ ապահովութեան և անդորրութեան մէջ կ'ապրին։

ԶԱՆԶԻՊԱՐԻ ՎԵՀԱՊԵՏԸ 14 հետեւորդներու հետ ուխտի գացած է Մէքքէ։ Հիճազի կուսակալ Րաթիպ փաշա պաշտօնական ընդունելութիւն մ'ըրեր և կոչունք մը տուեր է ի պատիւ անոր։ Զանզիպարի վեհապետը 24 ժամ Ճէտտէ մնալէ վերջ, Մէքքէ ուղեւորեր է զինուորական պահակախմբի մ'ընկերակցութեամբ։

ԼՈՆՏՈՆԻ օսմ. դեսպան Միւզիւրիւս փաշա անցեալ Դշ. օր նոր տեսակցութիւն մը ունեցած է արտաքին գործոց նախարար Լորտ Լէնստաունի հետ։

ԿԱՊԱՆ—ՄԱՏԷՆԻ (Խարբերդ) Եաւմա—Տաղը կոչուած տեղը բնակող Տէրիճան վրանաբնակ ցեղին մարդոց մէջ մարդահամար պիտի կատարուի, և օրինական վիճակաւ զինուոր պիտի առնուի, պայմանաւ որ նոր զինուորներն հեռաւոր տեղեր չղրկուին, այլ իրենց բնակավայրին մօտակայ վաշտերուն մէջ ծառայեն։

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ. — Եմէնի կուսակալութիւնը, գիւղային սահմանագլխի խնդրոյ մը առթիւ, Պէնի—իւլ—Նէմրի ցեղին և Ջուլման գիւղին բնակչաց միջեւ ծագած վէճը բարեկամական եղանակաւ կարգադրելով, երկու սահմանակից գիւղերու բնակիչներն իրարու հետ հաշտեցուցեր է, և այս առթիւ բարեմաղթութիւններ եղեր են։

ԱԼՊԱՆԻԱՑԻՆԵՐԸ. — Սերպիական Օտդզիւա Սերպիա թերթին խմբագիր Մ. Սիմիչ, որ այժմ Ռումելիի նահանգներուն մէջ պտոյտ մը կ'ընէ, քանի մ'օր առաջ Բիրզէրին երթալով հռեւեւի Ալպանիացիներէ ոմանց հետ տեսակցեր է։ Մ. Սիմիչ կը յայտարարէ թէ Կայս. բոլոր ալպանիացի հպատակները Վեհ. Կայսեր ամէն հրամաններուն հաւատարմաբար կ'հնազանդին, և միշտ բարեմաղթութիւն կ'ընեն Կայսերական արեւշատութեան համար։

ՊԱՂՏԱՏԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ. — Քէօլնիշէ Զայթունկ կ'ըսէ թէ Անատոլուի երկաթուղեաց ընկերութիւնը 15 միլիոն ֆր. դրամագլխով նոր ընկերութիւն մը պիտի կազմէ, Գոնիա—Էրէյլիի գծին շինութեան համար։ Նոյն թերթն այս առթիւ կ'ըսէ թէ Հայտար—Փաշա—Էսկիշէհիրի և Էսկիշէհիր—Գոնիայի գծերուն մնացորդը 99 տարուան համար եւս երկարաձգուեր է։ Գոնիա—Էրէյլիի գծին շինութեան վրայ պիտի հսկէ Գոնիայի նահանգին երկրաչափ Միհրան էֆ։

ԴԱԴԱՐՈՒՄ. — Ցունարէն Թանիւրուսօս լրագիրն երէկ Տպագրական Տեսչութեան կողմէ դադարման դատապարտուեցաւ անպայման ժամանակաւ։

ԱՍԿՈՒԴԱ—ՎԻՔԹՈՐԻԱ զբօսանաւին հրամանատար Մ. Քէմբֆ Լիազաթի ոսկի շքանշան ստացաւ։ Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ, թիկնապահի մը միջոցաւ, հրամանատարին և զբօսաշրջիկներուն ղրկել 5 տուփ սիկառէթ և զանազան պտուղներ։ Ասկուդա—Վիքթորիա երէկ մեկնեցաւ, Վերին Վոսփորի մէջ պտոյտ մը կատարելէ վերջ։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ. — Սոֆիայի ոստիկանութիւնը 32 խռովարարներ եւս ձերբակալեր է։

—Բրոատիի մէջ, Արիֆ էֆ. անուն իսլամ մը տեղւոյն ոստիկանապետին օգնական անուանուեր է։

—Սոֆիայէ կ'հեռագրուի թէ հեծելազօրաց Ա. գունդէն վաշտ մը անցեալ Ուրբ. սահմանագլուխ գացեր է, հալածելու համար այն անձերը, որք Ֆնիպձէվոյի պահեստի զօրաց մթերանոցէն զէնքեր գողցած էին։ Վաշտին հրամանատարն հրահանգ ընդունած է պաշարել այն գիւղերն ուր ապաստանած են աւազակները։

—Վարչապետ Մ. Տանէվ, որ Եօքսինօկրատ կ'գտնուի Ֆէրտինանտ իշխանին մօտ, կ'կարծուի թէ անոր ստորագրել պիտի տայ հրամանագիր մը, որով պատերազմական նախարար պիտի անուանուի կա՛մ գնդ. Տիմիտրիէվ և կամ գնդ. Հաբաքիէվ։

— Պուլկարական Վէչերնի լրագիրը կ'հերքէ Պուլկարիոյ մէջ նախարարական տագնապի մը զրոյցները։

—Տօփնիցայի մէջ ձերբակալուած 20 խռովարարներ, ոստիկանական հսկողութեամբ Սոֆիա տարուելով, բանտարկուեր են։

—Սոպրանիէն 200,000 ֆր.ի վարկ մը քուէարկած էր, ոստիկաններու և ոստիկան—զինուորներու թիւն աւելցնելու համար։ Նոր ոստիկան—զինուորները դեռ ընտրուած չըլլալով, Սոֆիայի ոստիկանապետը Կառավարութենէն բաւական թուով հետեւակ և ձիաւոր զօրք խնդրեր է, բոլոր պահականոցներուն մէջ բաշխելու համար, և իր այս խնդրանքն ընդունուեր է։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԼՈՅՏԻ Թաւզորէ շոգենաւը, Պաթումէ մայրաքաղաքս եկած պահուն, Ֆաթսայի առջեւ խրեր է։ Սալրջուրկ շոգենաւն երէկ Ֆաթսա գնաց խրրուած շոգենաւին օգնութեան։

ՄԻՒԹԻԲԷՆ հեռագիր մը կ'ծանուցանէ թէ այս տարի Իսլամ ուխտաւորներուն թիւը 300,000ի չափ է։

ՔՐՈՆԻԿ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Պայրամի տօնին շնորհաւորութեան համար, Ս. Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Տիգրան էֆ. Տէր Ներսէսեանի՝ երէկ Կայսերական Պալատ երթալով, առաջին Սենեկապետ Բարձր. Հաճի Ալի փաշայի միջոցաւ թէ՛ իր և թէ ազգին կողմէ շնորհաւորութիւն և երախտագիտութիւն յայտնեց յառա Կայս. Գահոյից, և այս առթիւ արժանացաւ Կայսերական բարեհաճութեան և մեծարանաց։ Ն. Սրբազնութիւնն ապա շնորհաւորական այցելութիւն տուաւ Ա. քարտուղար Բարձր. Թահսին փաշայի, Բ. քարտուղար Բարձր. Իզզէթ փաշայի և բոլոր պալատական բարձրաստիճան պաշտօնատարներու։ Ս. Պատրիարքն ապա այցելեց Մեծ Եպարքոս Բարձր. Ֆէրիտ փաշայի, Բարձր. Սպարապետին, Դատական, Ներքին, Արտաքին և Ծովային գործոց Բարձր. նախարարներուն, ինչպէս նաեւ պետական ուրիշ բարձրաստիճան պաշտօնատարներու, և շնորհաւորեց Պայրամի տօնը։ Այսօր եւս այցելեց Բարձր. Շէյխ—իւլ—Իսլամ էֆ.ին, Պարսից դեսպանին և ուրիշ պաշտօնատարներու։

—Տ. Մեսրովպ, Տ. Բարթուղիմէոս Արքեպ.ները, ինչպէս նաեւ Տ. Հմայեակ և Տ. Գէորգ եպսկ.ներն երէկ Կայս. Պալատ երթալով, իրենց շնորհաւորութիւններն յայտնեցին յառա, այցելութիւն տուին պետական աւագանիին։

—Ամեն. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս, ստացած ըլլալով Պատրիարքարանէն հեռագրաւ իրեն ղրկուած 70 լիրայի ճամբու ծախքը, առաջիկայ շաբթուն մէջ ճամբայ կ'ելնէ դէպ Ատանա։

—Տ. Մովսէս Եպս., իր Երուսաղէմ հասնիլն հեռագրաւ իմացնելով Ս. Պատրիարք Հօր, կ'ծանուցանէ նաեւ սիրով և մեծարանօք ընդունուած ըլլալը Ս. Յակովբեանց Միաբանութեան և տեղային իշխանութեան կողմէ։

—Վարչական շրջանակներու մէջ խորհուրդ չկայ Եւլեմից Հոգաբարձութիւն կազմելու Պատրիարքարանի համար։ Ինչ որ կ'վերաբերի Պատրիարքարանի սեփական եկեմտից, կ'տնօրինուի Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ Դիւանապետներէ բաղկացած յանձնաժողովի մը ձեռամբ։ Եւլեմից Տեսչութիւնը ջնջուած է, եւ Միհրան էֆ. Զօպանեան լոկ Եւլեմից Դիւանին տեսուչն է։ Համարատուն է Տնտեսական Խորհուրդը, որ կ'շինէ և կ'քննէ Պատրիարքարանի եկմտացոյցը։ Այս կարգադրութիւնները փոփոխելու պէտք չի տեսնուիր։

—Պատրիարքարանի Ա. Գործակատարը պիտի որոշուի Քաղաքական Ժողովոյ նիստին մէջ որ պիտի գումարի առաջիկայ շաբթուն։ Այս անուանում Խառն Ժողովոյ չի պատկանիր։ Թէեւ ընտրելներն օրէ օր կ'աւելնան, բայց հիմակ ամէնէն աւելի խօսուածներն են՝ Հրանտ էֆ. Ասատուր, Եդոնիկեցի փաստաբան Կարապետ էֆ. Սէֆէրեան, ծանօթ ուսուցիչ Պետրոս էֆ. Կարապետեան, և փաստաբան Վռամշապուհ էֆ.ի ընկեր Նշան էֆ. Սերվերեան։ Իսկ Աւետիս էֆ. Սուրէնեան մեզմէ կ'խնդրէ ծանուցանել թէ ինք երբեք թեկնածու եղած չէ այս պաշտօնին, ինքզինք բոլորովին իր փաստաբանական զբաղումներուն նուիրած ըլլալով։

—Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդը բացատրութիւններ տուած ըլլալով Սամաթիոյ քահանաներէն Տ. Անանիայի նկատմամբ, անոր վրայ դրուած արգելքը վերցաւ, պայմանաւ սակայն որ Թաղ. Խորհուրդին տուած բացատրութիւնները Կրօն. Ժողովն ալ քննէ։

—Տիկին Երանուհի Բարթող փաշայի ծախքով արծաթեայ յիշատակարան մը պիտի դրուի Ցիւսուֆ Գերեզմանին վրայ։

—Խառն Ժողովը վաղը լիագումար նիստ պիտի ընէ։ Երէկ և այսօր հրաւիրագրեր ուղղուեցան բոլոր անդամոց։

—Ս. Պատրիարք Հայրն երէկ այցելեց նաեւ Կրօն. Ժողովոյ Ատենապետ Տ. Գրիգորիս Արքեպսկ. Ցովհաննէսեանի։

—Երզն'կայէ կ'գրեն մեզ Փետր. 15 թուով. «—Դեկտ.ի վերջին օրերէն մինչեւ Ցնվ.ի կէսը սաստիկ ձմեռ մ'ունեցանք, այնպէս որ շուկացին չկրցաւ խանութ բանալ և վարժարանները գոցուեցան։ Այնուհետեւ օդն սկսաւ երբեմն մեղմանալ, երբեմն խստանալ։ Ուտելիք ու վառելիք առատ ու աժան են քաղաքս։

«—Ամբողջ քաղաքիս համար միակ ու միայն Ազգատախնամ Ցանձնաժողով մը կայ, որուն եկամուտի աղբիւրներն են կիրակի և տօնական օրեր չորս եկեղեցիներու մէջ շրջագայած սկաւառակները, յանուն ննջեցելոց նուէրները, են.։ Այս Ցանձնաժողովէն զատ, ամէն տարի Բարեկենդաններին յատուկ Մասնաժողով մը կ'կազմուի, որ հանգանակութեան եկեղով արդիւնքը կ'յատկացնէ աղքատներն ալ մասնակից ընելու Բարեկենդանի ուրախութեանց։ Մասնաժողովն այս տարի հաւաքեց 1800 ղրշ.ի չափ գումար մը։

«—Վիճակիս մէջ այս տարուան ամուսնութեանց թիւն էր 146, անցեալ տարուընէ տասնեակ մը պակաս։»

—Պալաթի Թաղ. Խորհրդոյ անդամներէն մին հրաժարած և իր հրաժարականին վրայ պնդած ըլլալով, Թաղ. Խորհրդոյ առաջարկութեան վրայ Պատրիարքարանն հաստատեց Մ. Համբարձում էֆ. Նէմէնիճեանն իբրեւ անդամ նոյն Խորհրդոյ։

—Սեբաստիոյ նոր ընտրուած Կրօն. և Քաղ. Ժողովներուն հաստատութեան կոնդակները ղրկուեցան։

—Գուլֆուլեան Որբանոց.—Բարեպաշտ մին, յանուն որբանոցիս մէջ պատսպարուած որբուհիներուս, 2 օսմ. ոսկի նուիրեց։ Ատաբազարէն Գրիգոր էֆ. Ոսկանեան՝ Փիլիպոս էֆ. Գասապեանի ամուսնութեան առթիւ 1 օսմ. ոսկի, ձեռամբ Բիւզանդիոն լրագրոյ Տէր և Տնօրէն էֆէնտիի։ Կարապետ էֆ. Խաչատուրեան մէկ տարուան համար Բիւզանդիոն լրագիր։ Օր. Արուսեակ Ֆրէնկեան մէկ տարուան համար Սուրհանդակ լրագիր։ Պ. Պալենց էֆ. 6 հատ աղօթագիրք։ Օր. Նուիմի և իր եղբայրը՝ Վրդանէս էֆ. Գափամաճեան Բարեկենդանի առթիւ երկու թէփսի բաքլավա ղրկեցին որբանոց։ Բարեպաշտ մին 10 ղշ.։ Բարեպաշտ նուիրատուաց խորին շնորհակալութիւնս կ'յայտնեմ։

Մայր Գալֆ. Աղջկանց Որբանոցի
Քրիստինէ Մայր. Փափազեան

Խասգիւղ, Փետր. 22

Վերջին պահուն ցաւօք կ'լսենք ծերունազարդ Շարգիէի և Սուրհանդակի տէր և տնօրէն Տիգրան էֆ. Ճիվէլէկեանի եղբօր Ցովհաննէս էֆ.ի մահը։ Այս ծանր կորուստին առթիւ մեր ցաւակցութիւնը կը փութանք յայտնել մեր Մեծ. պաշտօնակցին։

Տէր եւ Տիկին Տիգրան Ճիվէլէկեան եւ զաւակունք, Տէր եւ Տիկին Կարապետ էֆ. Պօյաճեան եւ որդին, Տէր եւ Տիկին Ցովսէփ էֆ. Համամճեան եւ զաւակունք, Գասպար էֆ. Նէվշէհիրլեան, Օրիորդ Տերիկ և Աննիկ Նէվշէհիրլեան, Տէր եւ Տիկին Միհրան էֆ. Մամուլեան եւ զաւակունք, Միհրան էֆ. Ճիվէլէկեան, Կարապետ էֆ. Ճիվէլէկեան, ինչպէս նաեւ Ջօլագեան ընտանիքը ցաւօք սրտի կ'ծանուցանեն դառնաղէտ մահն իրենց եղբօր, մօրեղբօր, հօրեղբօր եւ հօրեղբօրորդւոյն,

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆԻ
ԵՂԲՕՐ
ՃԷՐԻՏԷԻ ՇԱՐԳԻՅԷ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ՏԻԳՐԱՆ ԷՖ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆԻ

որ հանգեաւ ի Տէր երէկ երեկոյ, կազդուրեալ Եկեղեցւոյ Ս. Խորհուրդներով։

Ցուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի Չորեքշաբթի առաւօտ ժամ 4ին, Ս. Ցովհան Ոսկեբերան եկեղեցին, ի Թագսիմ, ուր արդէն փոխադրեալ է հանգուցելոյն մարմինը։

Բերա, 24 Փետր. 1903

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱԹԷՆՔ, Մարտ 9.—Օսմ. դեսպան Րիֆաթ պէյ այսօր այցելութիւն տուաւ վարչապետ Մ. Տէլեանիսի և ծանոյց անոր թէ Կայսերական Իրատէ մը հրամայած է Թուրքեհէլլէն առեւտրական դաշնագիրն ստորագրել։ Միանգամայն պաշտօնապէս ծանոյց թէ ի մօտոյ օսմ. արտասովոր դեսպանութիւն մը Աթէնք պիտի հասնի, Եորկիոս Թագաւորին, դահաժառանգ իշխանին և վարչապետին յանձնելու այն պատուանշանները զորս Վեհ. Կայսրը շնորհած է անոնց։

ՄԱՏՐԻՏ, 9.—Գաւառային Խորհուրդներու ընտրութեանց արդիւնքները դեռ ամբողջացած չեն։ Ընդհանրապէս կ'կարծուի թէ նախարարականք կ'յաղթանակեն։

ԲՐԱԿԱ, 9.—Աչէ կ'հեռագրուի թէ միջօրէէն 3¼ ժամ ետքը, երկրաշարժի բուռն ցնցում մը նորէն զգացուած է։

ՀՌՈՄ.—Թրիպունայի խօսքին նայելով, ստոյգ կ'երեւի թէ Զարը Նոյեմբերին պիտի այցելէ Հռոմ, իսկ Վիլհէլմ Կայսրը Մայիսին։

ՆԱՊՈԼԻ, 9.—Վեզուվ հրաբուխը սկսաւ բորբոքիլ։ Մոխիր և հրաշէկ բեկորներ կ'արձակէ։

ԼՈՆՏՈՆ, 9.—Պատերազմական նախահաշիւը 1903 տարեշրջանին համար 35 միլիոն 846,841 ստեռլինի ծախք կ'նախատեսէ, այն է նախորդ տարեշրջանին հետ բաղդատմամբ 3,202,000 ստեռլին աւելի։

ՊԵՐԼԻՆ, 9.—Ռայխսթակն ընդունեց պատերազմական նախահաշիւին քանի մը գլուխները։ Պատերազմական նախարարն ըսաւ թէ զինուորներու հանդէպ խիստ վարմունքի դէպքերը, արդիւնք ենթասպաներու չզգոյշ գործունէութեան, պատժուած են, վասն զի ակներեւ է թէ անգթութեան այս գիծն ամէն պարագայի կ'պատժուի օրէնքին տրամադրութեանց համաձայն։

ՆԱՍԻՕՆԱԼԻ ԵՒ ՖՈՒՌՆԻԷԻ

ԲԱՐԻԶ, Մարտ 9.—Երեսփ. Ժողովը, քրիստոնէական արական Միաբանութեանց տրուելիք արտօնութեանց վրայ, յառաջիկայ Եշ., Մարտ 12, պիտի սկսի վիճաբանիլ։ Վարչապետ Մ. Քօմպ որոշեց վստահութեան խնդիր յարուցանել։ Պիտի խնդրէ Երեսփ. Ժողովէն ընդունիլ Միաբանութեանց յանձնաժողովին ջատագոված դրութիւնը։ 25 ատենաբաններ արդէն խօսք ուզած են։ Վիճաբանութիւնն առնուազն եօթն նիստ պիտի տեւէ։ Քուէարկութիւնը Մարտ 17 կամ 18էն առաջ պիտի չկրնայ տեղի ունենալ։

—Ալժէէ կ'հեռագրեն թէ Բորթուգալի Թագաւորը ներկայ գտնուեցաւ կուսակալին կողմէ ի պատիւ իրեն տրուած հանդէսին։ Ն. Վեհափառութիւնը վաղը Թուլոն պիտի ուղեւորի։

—Կ'ըսուի թէ Մ. Վալտէք Ռուսօ ընտրելի պիտի ըլլայ Ֆրանսական Ակադեմիային։

ԼՈՆՏՈՆ.—Կապարի հրապարակը միշտ բանուկ է։ Վերջին պահանջուած գինն էր 13 3/16։

—Մր. Չէմպրլէն շաբաթ օր Անգլիա պիտի հասնի։

ՀՌՈՄ.—Զարին ուղեւորութիւնն ի Հռոմ յետաձգուեցաւ՝ Նոյեմբերին։ Զարը Մայիսին Քոբէնհակ պիտի երթայ։

—Պապն այսօր կէս օրին 5000 Իտալացի, Աւստրիացի և Պելճիացի ուխտաւոր ընդունեց։

ԱԹԷՆՔ.—Այսօր, Երեսփ. Ժողովին մէջ, Արտաքին գործոց նախարար Մ. Սքուզէս յայտարարեց թէ Թուրքիոյ հետ Ցունաստանի յարաբերութիւնք առաւել քան երբեք սիրալիր են։

ԼԻՎՐՊՈՒԼ.—Նիւ—Եորքէ լուրերն անկում կ'ծանուցանեն ցորենի գնոյն վրայ, 79.50, ինչ որ պատճառ եղաւ տեղւոյս գնոյն 6/2/50ի իջնալուն

ՊԵՐԼԻՆ.— Կ'ծանուցուի թէ Գերմանիա յառաջիկային նաւային ցոյց մը պիտի ընէ Պրազիլիոյ դէմ։

ԺԸՆԷՎ.— Լուիզ իշխանուհին Լէնտաուէն Անգլիա պիտի երթայ։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնս. Սէրի Դ.	Օ.Ո.	32 25¼
Ամէնէն բարձր գին	»	32 31½
Ամէնէն վար գին	»	32 23¼
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	123 50
Ամէնէն բարձր գին	»	124 —
Ամէնէն վար գին	»	123 37½
Թրամուայ	»	143 —
Ամէնէն բարձր գին	»	143 —

ԲԱՑՈՒՄ Փետր. 25/10 Մարտ

Օսմ. Քոնս. Սէրի Դ.	Օ.Ո.	32 26¼
» » »	ժամ 6ին	32 26
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	123 87½
» »	ժամ 6ին	123 75
Թրամուայ	ֆր.	145 —
Թրամուէյ բաժնեթ.	ղրշ.	605 —
» պարտաթ.	ֆր.	493 —
Տէրքոսի Ջուրի Ընկ.	»	270 —
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Լ.Օ.	4 22½

ՄԹԻԼԱՆՑ

Քոնսոլիտէ մէկ օրուան	Օ.Ո.	1 70
» ութ օրուան	»	3 35
Ռումելիի Երկթղ. »	ֆր.	2 50

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 Ֆրանքնոց	ղրշ.	87 35
Անգլիական ոսկի	»	110 02
Բօլ Էմբէրիալ	»	90 —
Մէճիտիէ արծաթ	»	107 38
Քրիմից	»	51 06
Նոր Մէթալիք	»	106 —
Ռուսլ Թղթադրամ	»	8 60

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, Մարտ 9

Օսմ. Քոնս. Սէրի Բ.	Ա.Ո.	60 25
» » » Գ.	»	31 75
» » » Դ. բաց.	»	29 63
» » » Դ. գոց.	»	29 63
Օսմ. Կայս. Պանքա	»	14 —
Եգիպտական միացեալ	»	107 75
Անգլ. Քոնսոլիտէ	»	91 37
Այտընի Երկաթուղի	»	14 —
Փոխառութիւն Գասապա	»	89 50
» Հելլենական 1881	»	42 —
» » 1884	»	42 —
Մօնօբօլ »	»	44 —
Պուլկր. Փոխառ. 1888	»	92 —
» » նոր 1892	»	92 —
Փոխան. Բարիզի վրայ	»	25 37½
Թրամուայ	»	5 50
Դրամազեղչ		4 —

ԲԱՐԻԶ, Մարտ 9

Օսմ. Քոնս. Սէրի Դ. բաց.	Ա.Ո.	30 10
» » » Դ. գոց.	»	30 10
» » » Դ.	»	32 37
Ռումելիի Երկաթուղի	ֆր.	128 —
Օսմ. Կայս. Պանքա	»	605 —
Օսմ. Մաքս. Նոր Փոխառ. 4%	»	481 —
Ֆրանս. Ռանթ 3%	»	100 20
Քրէտի Լիոնէ	»	1130 —
Պանք տը Բառի	»	1115 —
Սպանիական արտաքին	»	91 50
Իտալական Ռանթ	»	102 40
Թրամուայ	»	142 50
Չէք Լոնտոնի վրայ	»	25 150
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՊԵՐԼԻՆ, Մարտ 9

Անատոլուի Երկ. պարտաթ. մարք		103 70
» » բաժնեթ. 60%	»	100 —
Ռումելիի Երկաթուղի	»	130 20
Օսմ. Քոնս. Սէրի Դ.	»	30 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 320
Դրամազեղչ		4 —

ՎԻԵՆՆԱ, Մարտ 9

Փոխան. Բարիզի վրայ	քուրոն	95 62
» Լոնտոնի վրայ	»	240 30
Ռումելիի Երկաթուղի	»	117 70
Օսմ. Ռէժի	»	344 —
Դրամազեղչ		3 —

PHŒNIX ASSURANCE COMPANY

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՓԻՆԻՔՍ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ ՅԱՄԻՆ 1782

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՑՔ ԱՆԳԼ. ՈՍԿԻ 1,200,000



ՓԻՆԻՔՍ Ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի եւ կայծակի՝ կալուածք, կահաոյք եւ ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք եւ մինչեւ գրութեամբ ստորագրելուս, որ ունիմք լիազօր իւրաքանչիւրին կազդարելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասները։

Հ. ՍՈՒԱՆ և Ընկ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Գալլիպոլիոյ եւ Սեւ Ծովու եզերաց, Ղալաթիա, Գանք Օթոմանի վարի քովը Վիթալիս Խան, պետնայարկ Թիւ 1։

ՓԻՆԻՔՍ, հիմնեալ ուժի քան մի դար առաջ, ասոկ հրդեհի ապահովութիւն մ'է որոյ բաժնեհարք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով ամենահան պատասխանատուութիւն։ Դրամագլուխն և պահեստի գումարը կը հասնին 4,000,000 անգլ. ոսկիի։

ՓԻՆԻՔՍ Ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մէկ գլխաւոր ապացոյցն է 22,000,000 անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհ կրեալներուն համար։

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԱԼ ԱԶԳԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՍՈՖԻԱ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ, ՊԱՀԵՍՏ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՈՒՐԱՐ ՖՐԱՆԿ 7,500,000

ԿԵՆԱՑԻ ՃԻՒՂ

1899ի ապահովագրութեանց գումարն է 19,534,276 ֆր։ Ամբողջ կեանքի վրայ և խառն ապահովագրութիւն, կրկին դրամագլխով, ոտից օժտի դրամագլուխ այլ և այլ կարգադրութիւններով, չափաւոր սակերով ու նպաստաւոր պայմաններով։ Մէկ տարուան ապահովագրութենէ յետոյ ապահովագիրն անվիճելի կ'դառնայ։ Ընկերութիւնն ո՛և է առարկութիւն չընէր ապահովագրեալին անձնասպանութեան վնասատրի, սակայն կզոյ ճամբորդելու պարագային, եթէ առանց իսաց արբանեակելու ալ կատարուի։ Նմանապէս ո՛և է սակի յաւելուած չի պահանջեր։

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Ներկայ ապահովագրութեանց գումարն է 460,267,203 ֆր.։

Դանձուած ապահովագիր 1,433,965 ֆրանք։

Ապահովագրութիւն փայտաչէն ու քարուկիր շէնքերու, կարասիներու և ապրանքներու՝ նպաստաւոր պայմաններով։

ՓՈԽԱՌՈՐՈՒԹԵՒՆՆԵՐ ՃԻՒՂ

Ապահովագրութիւն վաճառքներու, շոգենաւերու մասին, աշխարհիս ո՛ր կողմն ալ ուղեւորին։

1896ի չահաբաժինն է 18½ %, 1897ինը՝ 18 %, 1899ինը՝ 18 % և 1899ը՝ 16%։

Ընկերութեան դրամատուներն են ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ կ. Պոլիս, ԱՆԿԼՕ—ԱՒՍՏՐԵԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ Լոնտոն, ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ԱԶԳԱՑԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ Սոֆիա։

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ։

Ղալաթիա, Մերճիդեան փողոց, ՃԽՒՐ Խան, ՃԽ- 4։

Գաւառաց համար պատասխանատու երաշխաւորութեամբ գործակալներ կ'փնտռուին։

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՋԵՐՄԱՄԻՋՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՍՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԲՈՒԺԷ

ՍԱՆԹԱԼ ՔԼԻՆ

ՄԷԿ հանի օրուան մէջ օրական 8—12 հաս հաքսիլ առնելով։

ԲՆԱԿԻԼ ՄՈՒՍԼԻՆ ԿԸ ԲՈՒԺԷ ՁՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԳՆՈՒՆ ՃԱՐԸ ՄԱՒՆԱԻՐԸ

ՀԱՋԸ ՀԱՐԲՈՒԽԸ, ԻԶՈՒԱԾՔԸ ԱՆՔՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲՈՒԺԷ

ՍԻՐՈ Տ' ՕՊԼԷՐԺԻԼ

Կը ձախորդի Բարիզ կ'էնէ եւ Քօնտր վաճառատունն եւ Կ. Պոլսոյ ու գաւառներու գեղատեսիլներու եւ դիմադրութեանց մէջ։

ՀԱՒԱՐ, ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա.ԶԴ.—Վարչական ժողովը կ'ծանուցանէ Օսմ. Հանրային Պարտուց արժէթուղթ ունեցողներուն թէ 1881 Դեկտ. 8/20ի կայսերական հրամանագրին ե. յօդուածին 5րդ հատուածին համաձայն, իրենց պայմանժամին ետարտուէն մինչեւ վեց տարի չգանձուած բոլոր կտրոններն իրենց արժէքը պիտի կրթսըցնեն։ Հետեւապէս, ինչպէս պարտաթուղթերուն թիւ 13 կտրոնները, որոց պայմանաժամն էր 1897 Մարտ 1/13, եթէ մինչեւ 1903 Փետր. 28/13 Մարտ չգանձուին, պիտի մնան Հանրային Պարտուց Վարչութեան։

23/6 Դեկտ. 1902


Ա.ԶԴ.—Վարչական ժողովը կ'ծանուցանէ 4% Բրիօրիդէ պարտաթուղթ ունեցողներուն թէ 1890 Ապրիլ 15/27ի կայսերական հրամանագրին Ժ'ի. յօդուածին համեմատ, իրենց պայմանաժամին տարուելէն մինչեւ վեց տարի չգանձուած բոլոր կտրոններն իրենց արժէքը պիտի կրթսըցնեն։ Հետեւապէս, թիւ 27 կտրոնները, որոց պայմանաժամն էր 1897 Մարտ 1/13, եթէ մինչեւ 28/13 Մարտ 1903 չգանձուին, պիտի մնան Հանրային Պարտուց Վարչութեան։

23/6 Դեկտ. 1902

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՈՐՆ Է ԵՒ ՈՒՐ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵԼ

Բան Ջալալ Օղլուի Խուրճը



Գալիս, Ծխախոտի մեքենաներ զբաղող, 14 Թիւ վաճառատան առջեւ, առանց իրաւունք մ'ունենալու, Ջալալ Օղլուի խարխանիչ Տպէտով ծիկառի Թուղթը ծախելուն համար, քաղաք արուած է ձերնհաս դատարանին եւ միւս կողմէ Հանրօգուտ չինութեանց նախարարութենէն «կրկին խարխիչ» վաճառանիշը գործածելու արտօնութիւն առնելած է։ Կեղծարարները զգուշանալ համար պէտք է դիմել Գալիս, Ալաճա—Համամ, ձէյիթ խան, Թիւ 24 վաճառատունը, և ուշադրութիւն ընել «կրկին խարխիչ» վաճառանիշին և 24 Թիւին։ 45

Այցելութիւն, Չրի
Օրնեակ, Չրի
Փարճ, Չրի
Դնեհատուած, Չրի

Մեր Վաճառատան առէպ առէպ կը հանին Հնդկատանի, Մէյլանի, Չինի և Ճավայի ընտրելագոյն ազարակներէ

ԹԷՅԵՐ

որք մեծ քանակութեամբ կ'ապառին։ Այս անգամ հասած և հասնելիք լաւագոյն Թէյեր չատ գեղացուցիչ գներով կ'վաճառուին։ առաներու մէջ գործածելու Թէյեր չատ խնայով գաւառած են որք գոհ կ'Թողուն այցելուները։

Այցելեցէք ԱԻՏՏԻՍ ԱԼՔՄԵԱՆԻ Վաճառատունը, Թահմիզ փողոց, Թիւ 49, Կ. Պոլիս։

Գաւառներու յանձնարարութիւններ կ'ընդունուին գոհացուցիչ պայմաններով։ 45

ՍԱԼԱՄԱՆՏՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ



Դրամագլուխ և պահեստ 7,400,000

Շէնքի, կարասիի, ապրանքի եւն. ապահովագրութեան համար դիմել

ԿՐՈՆՈՒՆԿ, ՏՀՆԼՕՐ և ԸՆԿ.

8, Օսմանեան օղլու խան, Պոլիս

ԳՈՆԵԱՓԻ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի 1845 ԲԻՐԻԱ

Մ. ՊԱՐՊԱՐԵՍՈ ԵՂԲԱՐՔ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՄԹԵՐԱՆՈՑ

ԲԻՐԻԱ

ՄԵԾ ՄԹԵՐՔ

600,000 ԱՄԱՆ

ԳՈՐԾԱՏԱՂԻ ԳՈՆԵԱՓԻ ՄԷՐՆԱՆԵՐՈՒ Ի ՎԱՃԻՌՕՆ

GRANDE DISTILLERIE

Barbaresso Frères

PIRÉE (GRÈCE)

ՔՕՆԵԱՓ ՊԱՐՊԱՐԵՍՍՕ Մ. ԵՂԲԱՐՑ

Պարպարէսսօ Մ. Եղբարց յունական քօնեաքը զուտ խաղողի արտադրութիւն է որուն ճարտարարուեստական հակագործարանն հիմնուած է 1840ին և փոխանցուած է իրենց հօրմէն։ 1875 և 1888ի յունական արուեստանդէսը, 1889 ի Բարիզի, 1894ի Շիքագոյի ամերիկեան, 1895ի Պօրտօի և 1900ի Բարիզի մեծ արուեստանդէսները վերահաստատած են որ Պարպարէսսօ Մ. Եղբարց ժառանգաբար պատրաստած քօնեաքը թէ՛ հին է թէ՛ ընտիր և թ հատատութիւն վարձատրած են պաշտօնական մրցանակներով, նոյնը կ'հատատուն նաեւ մեծահռչակ բժիշկներու և քիմիագէտներու վկայութիւնք։ Պարպարէսսօ Մ. Եղբարց գործարանին արուած ուրիշ բազմաթիւ վկայագրերն ալ կրկորդ է թուել, քանի որ հանրածանօթ է այն և սպառումը՝ առաջին ատենի, մրցակիցներուն նախանձը գրգռելու չափ։

Սոյն վաճառատան մէջ կ'ծախուի նաեւ, բեռ կշռելու համար բնաւ չաւրող օժանդիս կանիներ, Ծուխառած կանիի ընտիր օճառ և հեղկենական բերքեր, արտադրութիւններ ու ձեռարուեստներ։

Մանաւանդ պատիւ) Աղծաթ Խ-ոյ Մ. Փրկչի
) Հայթայթիչ արքայական տան Ն. վեհ. Ծուխառատնի Թագաւորին

50—35

Աւէչ յանձնարարութեան համար դիմել, Առ Պ. ԱՒԱՆԱՄ Մ. ՔՒԼՕՏՐԻՍՏՕ
Կ. Պոլիս. Ներկայացուցիչ Թուրքիոյ
Գալաթա

ՍԻՆԿԷՐ

ՀԱՁՈՒԱԾՈՒԻՉ ԿԱԶՄ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER MANUFACTURING Cº

Սինկէրի կարի մեքենաները զուտ անգլ. պղպատէ շինուած ըլլալով, իրենց ամրակուռութեամբ այնքան գնահատուած են որ աշխարհիս ամէն կողմը տարածուած են, և բոլոր ընտանիքները, դերձակներն ու կօշկակարները լոկ Սինկէրի մեքենայ ախտած են գործածել։ Սինկէրի Ընկերութիւնն ցարդ 400 է մասնի պատասխ վկայական և չքաղդամ տասցած է բոլոր գուցահանդէսներու մէջ։

Մանաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ։

Սինկէրի մեքենաները կ'վաճառուին՝

Բերա, Շիտակ ճամբայ, Ղալաթա Սէրայի դիմաց։

Բերա) Շիտակ ճամբայ Պօն—Մարշէի դիմաց Թիւ 343 և 343 կրկին.

Ղալաթա) Սինկէր Խան, Թիւնէլին առեւ.
) Թրամվայի կայարանին դիմաց.

Սամաթիա) Մուլթան Համամ Թիւ 2.

Սկիւտար, Չարչի Պօյու, Թիւ 120.

Կեղծարարներէ զգուշանալու համար վերի նշանին ուշադրութիւն ընելու է Ընկերութեան կեդրոնական վարչատեղին կ'գտնուի Բերա, Շիտակ ճամբայ, Թիւ 343 և 343 կրկին, Տիւզ Օղլու Սարգիս Ձէյի տունը։

ԷԼԼԷՐՄԱՆ ԼԱՑՆ

ԼԻՎԼՐՈՒԱԼ Ի Կ. ՊՈԼԻՍ, ԻՏԱԼԻԱ, ԱՒՏՐԻԱԿԱՆ, ՍՈՒՐԻԱ, ԱՆԱՏՕԼՈՒԻ ՆԱԵՒ ՄԵՐ ԾՈՎԻ ԳԷՏԵՐՆԵՐՈՒՆ։

Անուն	Թիւ	Անուն	Թիւ
Ալեքէրլէն	1,728	Էճէլըլէն	2,047
Ալզաչէրլէն	1,744	Ֆապրլէն	2,346
Անատուզլուլէն	1,744	Ֆալէտինլէն	2,322
Աթէնլէն	1,621	Ֆլամինկլէն	2,192
Լէսպրլէն	1,564	Ֆլավիլէն	2,179
Բրէսլէն	2,144	Ալմէդոլէն	2,984
Արապլէն	2,079	Աբերլէն	2,930
Մրնօ	835	Ալպանլէն	2,890
Օրտրօ	739	Լիվըրլն	669

ՊԼԷԿՏԱՎԻՐՆ չգենուած Լիվըրլէն հասած ընդհանուր վաճառքով, Անմիջապէս պիտի մեկնի։

ՇԱՆՕԹ.— Ապրանքի տէրերէն կը խնդրուի որ ապրանքնին ուրիշ նաւփոխադրելու կամ Ղալաթիոյ Մաքսատունն հանելու համար իրենց հասհանգը ղրկեն Փորձակալութեան, չգծենաւին գալէն 24 ժամ առաջ։ Դիմել առ

ՀՅՈՒԱՐՏ ԼԱՑՈՆԴԷՆ, Գոչխալլ Մեկէտ Ալի Փաշա խան, 20, Ղալաթիա, կամ առ ԷԼԼԷՐՄԱՆ Լայն Լիվրբուլ, 27 Ձէյմս Սթրէտ։

ԱՐՏՕՆԱՑՔ՝ ԲԻԶԱՆԴԻՈՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԱՆ «ԲԻԶԱՆԴԻՈՆ» ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլիս, Նո 23, 25, Գաղ Ալ Ճաղկաթ

ՊԱՅՄԱՆԷ "ԲԻԶԱՆԴԻՈՆ,,Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵՒԻՆ	6 Մեճ.
ՎԵՑԱՄՍԵԱԿ »	3 »
ՆԱԱՄՍԵԱԿ »	1 ½ »
ՁՈՒԼԵՐՁ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	20 Փր.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆԵՒԻՆ	
Բոսղ լոքալով	12 դրդ.
ՏԱՐԵԿԱՆ » » »	3 Մեճ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	36 Ֆր.
» ՎԵՑԱՄ. 18 ՆՈՄՈ. 9 Ֆր.	
ԱՆԴԼ ԼԻՐԱ 119 դրդ. — 20 ՖՐ.ՆՈՑ 94 ½ դրդ. — ՔՐԻՄԻՑ 55 դրդ.	

Նոյն պայմանք Կ. Պոլսոյ եւ Գաւառի համար։ ՄԻՇՏ ԿԱՆԽՆԻ

Թղթատարութիւնք՝ մեր վրայ։

Նամակ ֆօ-լը կ'ընդունի՝ 20 հատ 1 դրչ.-ոց
Բացօթեայ ֆօ-լը 20 դրչ է հալ-ով։

ԹԵՐԹՈՒ «ԲԻԶԱՆԴԻՈՆ»Ի (4)

ՔԱՒՎԻՒ ՏԸ ՄՕՆԴԷՍԻՆ

ՓՈՂՈՑԻ ԵՐԳՉՈՒՀԻՆ

Ա. ՄԱՍ.— ՍԻՆ ՄԱՆՏԷԻ ՈՁԻՐԸ

Գ.

—Առանց պատճառի արդիւնք չըլլար։ Ինչ կրնար ըլլալ ոճրին չարժառիթը, քանի որ դրամական խնդիր չկար։ Ալեքր Ֆօնտէնի քանկ ու թղթապահակը զողցուած չէին։ Ուրեմն հարկ եղաւ ուրիշ տեսակ պատճառ մը փնտռել, և անոնք չուտով երեւցաւ պայծառատիպ...։ Ոճիրն արդիւնք էր տառապանքներու և անձկութիւններու, երկար տարի տարուած, երկար տարի պահուած, զոր կոթիւ պիտի չխոստովանի երբեք, բայց մենք կ'գուշակենք։ Բնաւ տարակոյս չըկայ որ նախանձը դիտած էր մարդասպանին թիւը։

Ձիշտ այս միջոցին, մրմունջ մը պըտըտեցաւ ունկնդիրներուն մէջ, հնաւանր որոտումի մը ձայնին պէս։ Բայց Ընդհանուր Դատախազը կարեւորութիւն չտուաւ այս մրմունջին և չարունակեց.—Ավպէր Ֆօնդէն, առաւրի ըլլալով, սիրալիր ըն դունուած էր Տիկին Կօթիէէ, և առաւսրնը վրէժ կ'լուծէր վաղաբար սպանութեան զոհ մտնելէ իր բարեկամին եղած էր հրկար տարիներ։

Մրմունջը չատցաւ։ Տիկին Կօթիէ, Ընդհանուր Դատախազին խօսքերէն զգաստացած, գայթողի ձիւ մ'արձակեց։ Փօրժ Կօթիէ, լսելով այն ամբաստանութիւնը զոր կ'ընէին իր ամենասիրելի կնոջ դէմ, ոտք ելաւ, կապարագոյն, բարկութենէն զարհուրելի երեսով մ'առած, և սուղ ձայնով մը սա բառերը նետեց պաշտօնատրին երեսը.—Զարաչար կ'գործածէք ձեր դիրքը, Տէր Ընդհանուր Դատախազ, դի կալանաւոր ըլլալով չեմ կրնար ձեր երկու այտերն ապտակել։ Ձեր այդ ըսածը գաշնչելի բան է։ Սուտ խօսեցաք։

Տիկին Կօթիէ, ի՛նչ ալ ոտք եկնելով, կրկնեց.—Սո՛ւտ խօսեցաք։

Փողոցի երդիչն բռունցքը զարնելով վանդակորմին, որու եւսե կեցած էր, մրմռաց.—Անգամին մէկն է մեր այս պաշտօնատարը։

Այ կողմի դրացին նորէն պոռ մը բաւքալի երեսը հայեցաւ պիշ պիշ։ Իսկ նայուածքով կինը ցած ձայնով ըսաւ, այնքան ցած որ մարդ չկրցաւ լսել.—Այս մարդիկը վարպետ կ'կարծուին, բայց ո՛րքան անմիտ են։

Փոխրն անհկարագրելի էր։ Ձայրացած ունկնդիրները կիսատ խօսքերով կ'յայտնէին իրենց արհամարհանքը, վի ամենքն ալ կ'ընդվզէին անապացոյց ամբաստանութենէն, զոր Ընդհանուր Դատախազը կ'արձակէր Տիկին Կօթիէի դէմ։ Ամբաստանութեան մէջ կ'տեսնէին գարշելի հնարք մը, անուղիղ վարպետութիւն մը, երդուեալներուն ժտքին վրայ ազդելու համար։ Այս վերջիններու անհանգստութիւն կ'ցոլային։ Չամարձակելով ունկընդիրներուն ժպտոտութեան մասնակցիլ, իրենց աչքերը վար առած էին և չէին դիտեր ինչ դիրք բռնել, զրագրողներուն և երիտասարդ փաստաբաններուն հանդէպ որք յայտնապէս ընդվզած էին։ Նախագահը, յօնքերը պռտած, զանգակը կը չարժէր տենդոտ ձեռքով մը։ Դատաւորները վարանումի նշաններ ցոյց կուտային։ Ամէն ոք կ'զար թէ դատի տպաւորութիւն մ'առած բերած էր Ընդհանուր Դատախազը։ Սա, անկարելիօրէն, բարբրիգլուխ, վտանգ ակնարկով, կարծես կ'արհամարհէր տիրող ազմուկը։ Փօրժ Կօթիէ իր աջոռին վրայ ինկած էր ընկճուած։ Հնչեղ ձայնով մը, որ բոլոր աղմուկին տիրապետեց, նախագահն ըսաւ.—Եթէ լռութիւնը չվերահաստատուի, սրահը պարպել պիտի տամ։

Ամէն մարդ կ'ուզէր մինչեւ վերջը կնշանակ։ Աղմուկը դադրեցաւ իբր կախարդանքով։ Փօրժ Կօթիէի փաստաբանն անտարբեր մնացած էր այս ժխորին ատեն զոր կարծես նոյն իսկ չէր լսեր։ կ'սպասէր։ Ընդհանուր Դատախազը, լռութեան վերահաստատուիլը տեսնելով, իր պահանջման ձայնը չարունակեց անօրինակ խստութեամբ, կարծես արհամարհելով հանրային կարծիքը, և սակայն զգուշանալով զայրոյթի նոր պոռթկուն մը առաջ բերել.—որպէսի կ'ներէր իրեն՝ իր խրոխտ բնաւորութիւնը։ Բարեկամի մը կողմէ իր լաւագոյն բարեկամին դէմ գործուած ոճրի մը սոսկալիութեան վրայ ծանրացաւ, կանխամտածութիւնը նշանակեց պերճ խօսքերով, և ընտանիքի տէր երդուելոց արդարութեան զգացումներուն կոչում ըրաւ դատապարտելու համար անբարոյութիւնն որ սպանութեան կ'յանգի։ Ցարգոյ պաշտօնատերը չէր խորհեր որ իր վարդապետութեան հանճարն, բո՛ւն յանցաւորը պիտի ըլլար Ավպէր Ֆօնդէն, արդարեւ պատճառ զոհը։ Իր կարծիքով, զթութեան արժանի չէր այն թշուառականն որ փոխադարձ սիրոյ այնքան տարիներէ ետքն իր բարեկամին սպանելու գաղտնի արիւթիւնն ունեցած էր։ Մանաւանդ պատիժ պահանջեց, քանի գիտակցութիւնն ալ ձեռք պիտի չտերէր, բայց անպատճառ չղթայակապ պիտառութիւն յօժարելով։ Ուէյմօնտ Կօթիէ չարժուած մը չըրաւ։ Նոր ակնարկ մը միայն փոխանակեց իր պաշտպանին հետ, որուն եկած էր խօսելու կարգը։ Ունկնդիրներէն աւելի փաստաբաններն էին որ անհամբեր կ'սպասէին իր պատասխանին։ Ընդհանուր Դատախազի պահանջման ճառին։ Բոլոր աչքերն անոր դարձան երբ ոտք ելաւ, հանդարտ ու պարզ, առանց տեսիլքի յուզումի։ Ունկնդիրներուն մէջ մահաւիպ լռութիւն մը տիրեց խկոյն։ Մ. Լօրան Պրիւնէլ 50 տարու մարդ մ'էր, Դատական պաշտօնատան մէջ յոյժ պրուած ու յարգուած։ Դատաբանը, ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, ականջ կուտար իրեն, վի գիտէր գնահատել անոր հազուագիւտ ողջմտութիւնն և ուղղամտութիւնը։ Չեզոքացիչ պերճախօսութիւն մը չունէր, և չէր փափաքեր տառապիչ տպաւորութիւն մը յառաջ բերել։ կ'խօսէր պարզօրէն, առանց ճոռոմութեան և իր խօսքերը միշտ արդարացի, միշտ սրտոյց էին։ Մանր ձայնով մը, որ նախասիրելի ձայնն էր երբ ուզէր ապացուցանել, սկսաւ.

—Տէ՛ր բ՛ք, ամէն բանէ առաջ պարտիմ մեծարանքս յայտնել Տ. Ընդհանուր Դատախազին, որ այնքան ուշադրութեամբ մը և, բայց միևնոյն ատեն կ'զարմանամ իր պահանջման ճառը սեալ գետնի մը վրայ հիմնած ըլլալուն համար։ Ընդհանուր Դատախազին համար ոճիրը միջանկեալ խրնդիր մ'է։ Անոր պատճառը փնտռելու պէտք կ'զգայ։ Զկրնալով գտնել, քանի որ գոյութիւն չունի իմ պաշտպանեալիս համար, գարշելի ամբաստանութիւն մը կը դարձնէ, անհիմն, անարդար։ Ամէնէն սքանչելի և ամէնէն անտգիտ առումներէն ու մայրերէն մէկուն պատուին և հետապնդելու կեանքին ու պատգային դէմ կ'յարձակի։ Անընդունելի, անկարելի անբարոյութեան դէպք մը կ'ինարէ փորձելու համար յանցաւոր ցոյց տալ պարկեշտ մարդ մը որու պաշտպանութիւնն ստանձնած եմ սա համոզմամբ և ստուգութեամբ թէ անմեղ է ան։ Տ. Ընդհանուր Դատախազը յիղի հաճի ինձ տալ սա ինդ որ ամենայն յարգանքով ըսած իրեն թէ անհոգիի մինչոյնքով և անհասարբ զենքերով կռուիլ է ան։ Իմ փոխանորդելիս պաշտպանողականը կարգ պիտի ըլլայ, Տեարք։ Ձչժարտութիւնն երեսն կ'երնէ, առանց երկար ճառախօսութեանց պէտք ունենալու։ Պահանջման ճառին քառնիելի կերպով երեւակայական փաստերը պիտի չյիշեմ, մի առ մի պատասխանելու համար անոնց։ Պարզապէս պիտի ըսեմ։—Մարդ մը սպանուած է, և կարգ մը հետքեր, որոց արժէքն յոյժ խնդրական է, փաստ հայթայթել կ'ծեսէ սպանեալ մարդուն լաւագոյն բարեկամին դէմ կազմուած ամբաստանութեան։ Այս անհատականին ոճրին պատճառ մը պէտք է. այս պատճառը կ'կարծեն գտնել խառնուած ամուսնոյ մը վրէժխնդրութեան մէջ, պէս քիչ մը անպայծառ էր, բայց չուտով եղաւ հնդել և թրթռուն, այսպէս սկսաւ.

—Տէ՛ր բ՛ք, ամէն բանէ առաջ պարտիմ մեծարանքս յայտնել Տ. Ընդհանուր Դատախազին, որ այնքան ուշադրութեամբ մը և, բայց միևնոյն ատեն կ'զարմանամ իր պահանջման ճառը սեալ գետնի մը վրայ հիմնած ըլլալուն համար։ Ընդհանուր Դատախազին համար ոճիրը միջանկեալ խրնդիր մ'է։ Անոր պատճառը փնտռելու պէտք կ'զգայ։ Զկրնալով գտնել, քանի որ գոյութիւն չունի իմ պաշտպանեալիս համար, գարշելի ամբաստանութիւն մը կը դարձնէ, անհիմն, անարդար։ Ամէնէն սքանչելի և ամէնէն անտգիտ առումներէն ու մայրերէն մէկուն պատուին և հետապնդելու կեանքին ու պատգային դէմ կ'յարձակի։ Անընդունելի, անկարելի անբարոյութեան դէպք մը կ'ինարէ փորձելու համար յանցաւոր ցոյց տալ պարկեշտ մարդ մը որու պաշտպանութիւնն ստանձնած եմ սա համոզմամբ և ստուգութեամբ թէ անմեղ է ան։ Տ. Ընդհանուր Դատախազը յիղի հաճի ինձ տալ սա ինդ որ ամենայն յարգանքով ըսած իրեն թէ անհոգիի մինչոյնքով և անհասարբ զենքերով կռուիլ է ան։ Իմ փոխանորդելիս պաշտպանողականը կարգ պիտի ըլլայ, Տեարք։ Ձչժարտութիւնն երեսն կ'երնէ, առանց երկար ճառախօսութեանց պէտք ունենալու։ Պահանջման ճառին քառնիելի կերպով երեւակայական փաստերը պիտի չյիշեմ, մի առ մի պատասխանելու համար անոնց։ Պարզապէս պիտի ըսեմ։—Մարդ մը սպանուած է, և կարգ մը հետքեր, որոց արժէքն յոյժ խնդրական է, փաստ հայթայթել կ'ծեսէ սպանեալ մարդուն լաւագոյն բարեկամին դէմ կազմուած ամբաստանութեան։ Այս անհատականին ոճրին պատճառ մը պէտք է. այս պատճառը կ'կարծեն գտնել խառնուած ամուսնոյ մը վրէժխնդրութեան մէջ, և առանց վարանելու, առանց խորհրդածելու կ'մտնեն այդ ճամբուն մէջ, անհեթեթ կարծիքի մը դռնէդուռ երկու անմեղներ, մեծ պրուհատագէտ մը և կին մը, —այսինքն սրբուհի մը, որուն առաքինութիւնն չարգելու էին։ Բանաւոր մարդկամ մը սպանուած է իր երիտասարդութեան և հասուն տարիքին ընկերոջ դունչն քանի մը քայլ հեռու։ Այն ատեն կ'մտածէք, դուք, Արդարութեան պաշտօնեաներ, տարաւ դասուներ կ'հաւաքէք և իսկոյն չախչախէ ապացոյցներու կ'վերածէք զանոնք, առանց գոնէ ձեզի հարցնելու թէ արդեօք այս հետքերը պատրաստած չեն մարդի մէկ մեացած սպանչի մը կողմէ, զոր չէք փնտռեր իսկ։ Հոգւով մարմնով կ'նետուիք անձնանօթին բացած ճամբուն մէջ, և անոր ցոյց տուած անմիղին վրայ կ'յարձակիք։ Սուտերնին մէջ, ուր պահուրտած է, որքան կ'կնկաչայ արդեօք ձեր միամտութեան վրայ, ո՛վ մարդիկդ մեր Արդարութեան։ Աւասիկ ձեր գործած յանցանքը։ Աւասիկ ամէնէն զարհուրելի անարատութեան մը մեծնակէտը։

—Թատեան պատ մը։ Ո՛չ, փօրժ Կօթիէ չէ սպանուած իր Ավպէր Ֆօնդէն բարեկամը, ամենեւին պատճառ չունէր սպանելու, քանի որ իր պատուոյն դէմ ո՛և է յարձակում եղած չէր։ փօրժ Կօթիէ զոհն է դժոխային մէքենայութեան մը որ պատրաստած էր կորստեան մատնելու համար զինքը։ Աւասիկ ինչ որ չուզեց տեսնել մեր Արդարութիւնը։ Աւասիկ ինչ որ պիտի տեսնէք դուք Տեարք երդուեալք, հարցաքննելով ձեր խիղճը, և ուշադրութեան պիտի մատնէք յոյժ ամբաստանութիւն մը որ սուտի մը վրայ միայն կ'նայգէի և պիտի հռչակէք անմեղութիւնը պարկեշտ մարդուն որ այրեան տարտ պատ չարչարանքներ կրեց։ Եւ ասկիա ընելով, արդարութիւնն ի գործ դրած պիտի ըլլաք։ Ընծիքա ըսի։

(Շար.) Թրգմ. Փ. ԵՒՐԱԿԱՑԻ